

2189

# Խ Տ Ռ ՈՒ

ՅԵՎ

## ԱՍՎԱՆՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԱՆԱԶԱՆ ՀԱԿԱՏՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ)



ԽՈՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ, 1929

201  
Յու - 14

lyub  
03 AUG 2008

2189

Հա 4

ԿՊ 3

201

Յմ - 14

ԳԱԼԵՐԻՅԱ ՅԱԶՎԻՑԻՑԿԻՅ

$\frac{2}{7}$

# ԱՍՏԾՈՒ

## ԱՏՎԱՆՉՊԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԱՆԱԶԱՆ ՀԱՎԱՏՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ)

1/օրու



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ, 1929

09.07.2013

Թարգմանություն Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ



1478-98

Главлит № 98334

Зак. № 2236.

Тираж 3000 экз.

Книжная ф-ка Центр. изд-ва народов ССР. Москва, Шлюзовый проезд, 6.

Վերջերս ավելի յեն կատաղած մեր դասակարգային թշնամիները — նեպմանը, կուլակը, հին բուրժուազիայի մնացորդները, հին ու նոր բյուրոկրատները, բուրժուական ինտելիգենցիան. դրանք տերտերների ու տերտերականության հետ դաշն կնքած՝ ավելի ևս մեծ յեռանդով են հենվում կրօնի վրա — աշխատավոր մասսաները բթացնելու, ստրկացնելու և կեղեքելու այդ փորձված գործիքի վրա: Ինչպէս բացատրել մեր դասակարգային թշնամիների այդ համերաշխությունը, կրօնի, յեկեղեցու այդ աշխատացումը:

Նրանք տեսնում են, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը՝ մեծագույն դժվարություններ հաղթահարելով՝ քայլ առ քայլ մերձենում և սոցիալիզմին, նրանք տեսնում են, վոր պրոլետարական պետությունը տարեց-տարի ամրանում և վերջնական մահ սպառնում իր դասակարգային թշնամիներին. ու նրանք մահամերձ հիվանդի փորձեր են անում՝ համախմբվելով կրօնի, յեկեղեցու շուրջը և դրա թույնով աշխատավոր տգետ մասսաներին բթացնելու ու իրենց ազգեցության տակ առնելու համար:

Դրանց այդ ջանքերին մենք պետք են հակադրենք հակակրօնական ուժեղ պայքար՝ ամեն տեսակի կրօնի ու դավանանքի դեմ:

Կուսակցության յուրաքանչյուր անդամ, յարաքանչյուր կոմյերի-տական, յուրաքանչյուր բանիմաց բանվոր ու աշխատավոր զյուղացի պետք և հասկանան, վոր հասրավոր չե պայքարել սոցիալիզմի համար՝ առանց պայքարելու կրօնի դեմ, վորը բուրժուազիայի ձեռքին խիստ ուժեղ գործիք և հանդիսանում և նշանակալից դեր ե կատարում դասակարգային պայքարի մեջ:

Պատմական-փաստական տվյալներով շատ պարզ ու մատչելի շարադրված այս գրքույկը բաց կանի նույնիսկ ամենամոլեռանդ կրոնամոլի (յեթե սա կարդա) աչքերը և նրա համար կպարզի կրոնական ամեն տեսակ մոլորությունների ծագումն ու կերպարանափոխությունները, վոր տեղի յեն ունեցել սոցիալական կյանքի աշխատանքային պայմանների տարբերության հետեանքով, դասակարգային ռեալ շահերի ազդեցության տակ ու նկատառումներով։

Այս գրքույկն ևս, մեր\* և Պետհրատի հրատարակած համապատասխան գրքույկների հետ միասին, պետք է լայն տարածում գտնի։

Այս գրքույկի մեջ, համապատասխան տեղերում, ուր խոսվում ե զանազան կրոնների ու դավանանքների, յեկեղեցական ծեսերի և այլ մոլորությունների մասին, ավելացված են նաև հայ յեկեղեցու մասին պատմական հետաքրքիր տվյալներ ու բացատրություններ։

## ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՎԱՏԻ ՄԱՍԻՆ

Թ. քաղաքում ապրում եր մի անհավատ մարդ, անաստված մականունով։ Այս անաստվածը շատ խելոք եր, ուժեղ և աղղեցիկ։ Նույն քաղաքում ապրող տարբեր հավատի մարդկանցից յուրաքանչյուրը ուզում եր անպատճառ ստիպել այդ անաստվածին հավատալ ըստ յուր ձեփ, որենքի, կարգի։

Թ. քաղաքը, ուր ապրում եր անաստվածը հավատացյալների հետ, մեծ եր, վաճառաշահ, բազմամարդ, բայց դարձյալ, ուր ել նա շուռ գար, հանդիպում եր հավատացյալների, վորոնք վեճի ելին բռնվում նրա հետ, հանդիմանում, ամաչեցնում և հորդորում ընդունել իրենց հավատը ինչպես ճշմարիտ կրոն։

Ծկզբում անաստվածը հանաք եր անում և ասում։

«Են, թող անաստված լինեմ, վոչ վոքի յես չեմ մնասում, կուշտ եմ, տաք, խելքս ել բավական։ Զեր հավատին ել չեմ դիպչում, ել ինչո՞ւ յե անհանգստացնում ձեղ իմ անաստվածությունը»։

Ի վերջո այս բանը նրան զգվեցրեց, և նա վորոշեց լրջորեն խոսել տարբեր հավատի մարդկանց հետ։ և ահա քաղաքում լուր տարածվեց, վոր մեծ հրապարակում պիտի հավաքվեն բոլոր հավատի հոգեսոր հայրերը և պիտի զրուցեն անաստվածի հետ, և ում հավատը ճշմարիտ դուրս կգա, այն ել անաստվածը ամբողջ ժողովրդի առաջ կընդունի։

Վորոշյալ որը հրապարակը լցվեց անհամար բազմությամբ, ասեղ գցելու տեղ չկար։ Բոլորն ել նայում ու սպասում ելին, իսկ մի առանձին բարձր տեղ բազմել ելին — հայ տերտերը՝

\* Մենք հրատարակել ենք նաև հետեւալ մասսայական գրքույկները. — 1) «Տգիտությունը և սնամավատությունը», 2) «Վորոտ, կայծակ և ելեքտրականություն», 3) «Ենչպես և սարքած տիեզերքը», 4) «Արեը, նրա գորդիները և թուները», 5) «Ենչպես և ծագել և դարդացել կյանքը յերկրի վրա», 6) «Մարգու և կենանու ծագումը», 7) «Մարտը-մեքենա», 8) «Հեռագիր, հեռախոս, ռազիո», 9) «Յերկրաշարժ» (պատմվածք), և այլն։

Լուսավորչու «աջը» ձեռքին, պրովուլավ քահանան՝ խաչն ու ավետարանը ձեռքին, կաթոլիկ քահանան՝ խաչավետարանով, ռաբբին՝ հրեից քահանան՝ թորան ձեռքին, մոլլան՝ մուսուլման քահանան՝ զուրանը բոնած: Բոլորն ել հանդիսավոր գգեստավորված սպասում եյին անաստվածին: Յեկավ վերջապես անաստվածը:

Ահա բոլոր քահանաներն ել մեկ մեկու յետևից սկսեցին իրենց հավատը գովել և ապացուցել, վոր միայն այն ե ճշմարիտ, իսկ մյուս հավատները սուտ եյին համարում: Յերկար խոսում եյին ջերմորեն և համողակիր, այնպես վոր շատ հավատացյալներ լաց եյին լինում: Յերբ բոլորն ել խոսեցին, վերջացրին, անաստվածը շնորհակալություն հայտնեց նրանց տված խորհուրդների համար և խնդրեց թույլ տալ իրեն մի քանի հարցեր տալ նրանց: Նրանք բոլորն ել ուրախությամբ համաձայնվեցին, և քահանաներից ամեն մեկը համոզված եր, վոր անաստվածը հենց իր հավատը պիտի ընդունե:

Անաստվածը ամենից առաջ դարձավ ռաբբին:

— Հրեից հավատը ամենից հինն ե, — ասաց նա, — ուստի ամենից առաջ քեզ եմ հարցնելու: Ասա, վ՞եր հավատն ե ճշմարիտ:

— Միակ ճշմարիտ հավատը, — պատասխանեց ռաբբին, — Մովսեսի հավատն ե: Յեհովան միակ աստվածն ե, և Մովսեսը — նրա մարդարեն, իսկ հրեաները — միակ հավատարիմ ժողովուրդը, մնացած բոլորն ել գոյեր են (այսինքն անհավատներ): Հրեաները կիրկվեն, մնացածները կորչեն, վորովհետև նրանք գոյեր են:

Հետո անաստվածը դարձավ մոլլային և նույնպես հարց տվեց իսկական հավատի մասին:

— Միակ ճշմարիտ հավատը, — պատասխանեց մոլլան, — Մահմեդի կրոնն ե: Միակ աստվածը ալլահն ե, և Մահմեդը — նրա մարդարեն. իսկ մուսուլմանները — միակ բարեպաշտները: Մնացած բոլորն ել զյավուրներ են, անհավատներ: Կիրկվեն միամիայն մուսուլմանները, իսկ մնացածները, պիտի կորչեն, վորովհետև զյավուրներ են:

Հետո անաստվածը դարձավ կաթոլիկ քահանային նույն հարցով, ու կաթոլիկը պատասխանեց.

— Միակ ճշմարիտ հավատը քրիստոնեությունն ե, կաթոլիկությունը: Սաբաովթն ե միակ աստվածը ամենասուրբ յերրորդության մեջ, ով չի հավատալ հայր աստծուն, վորդի աստծուն, սուրբ հոգի աստծուն, նա հերետիկոս ե: Գրված ե. «Նա միայն կիրկվի՛, ով Քրիստոսին զլուխ ե ճանաչում. իսկ Քրիստոսին զլուխ ունի միայն նա, ով նրա մարմնի մեջ ե, այսինքն՝ կաթոլիկ յեկեղեցու մեջ: Կաթոլիկները կիրկվեն, իսկ մնացածները կկորչեն, վորովհետև հերետիկոսներ են և ճշմարիտ յեկեղեցու թշնամի:»

Այսուեւետև խոսեց պրովուլավ յեկեղեցու քահանան.

— Միակ ճշմարիտ հավատը քրիստոնեականն ե, պրովուլավը: Միակ աստվածը — Սաբաովթ «ամենասուրբ յերրորդությունը». ով չի հավատալ հայր աստծուն, վորդի աստծուն, սուրբ հոգի աստծուն, նա հերետիկոս ե: Գրված ե. «Նա կիրկվի, ով Քրիստոսին զլուխ ե ընդունում, իսկ Քրիստոսին կընդունի միայն նա, ով նրա մարմնի մեջ ե, այսինքն՝ պրովուլավ յեկեղեցու մեջ. պրովուլավները կիրկվեն, իսկ մնացած բոլորը կկորչեն, վորովհետև նրանք հերետիկոս են և ճշմարիտ յեկեղեցու թշնամի:»

Հերթը հասավ հայ-լուսավորչական յեկեղեցու տերտերին.

— Գրիգոր Լուսավորչու սուրբ «աջի» զորությունը չունի և վոչ մի կրոն: Լուսավորիչը Քրիստոսի խակական հաջորդն ե յեղել յերկրիս վրա, իսկ մենք նրա հաջորդներն ենք. կիրկվի միայն նա, ով կհավատա մեր զորությանը: Լուսավորչական յեկեղեցու հետեղողները ինչքան ել խարեն, ինչքան ել գողություն, ավազակություն անեն, — կիրկվեն, իսկ մնացած կըսններին հետեղողները հավատայանս կկորչեն, յերկնքի արքայությանը չեն արժանանա:

Բոլորին լսելուց հետո, ասաց անաստվածը.

— Ի՞նչ ե դուրս գալիս: Դուք բոլորդ ել ասում եք. «աստած մի յե», և միենույն ժամանակ դուրս ե գալիս, վոր մարդիկ անպատճառ այդ մի աստծու ձեռքով պիտի կորչեն: Յեթե ձայնից բազմությամբ վորոշելու լինենք, յես վոչ մի աեղ ել փորկություն չալիտի գտնեմ: Որինակ, յեթե ընդունեմ հրեից կրոնը,

սաբբին ինձ պիտի ասե՝ «փրկվել ես», իսկ մնացածները՝ «կորար»: Ընդունեմ մահմեղական հավատը, մոլլան ինձ կասե՝ «փրկվեցար», իսկ մյուսները կասեն՝ «կորար»: Ընդունեմ կաթոլիկությունը, կսենձը պիտի ասե՝ «փրկվեցար», իսկ մնացածները կասեն «կորար»: Ընդունեմ լուսավորչականություն, հայ տերտերը կասե՝ «զրախտին արժանացար», իսկ մյուսները կասեն՝ «հավիտյան կորար»:

Դեռ խոսքը չեր վերջացրել, ահա տեսնում ե, վագեվադ դալիս ե բողոքական պաստորը: Գերմանացիք ճշտապահ ժողովուրդ են, բայց ահա նա ուշացել եր: Վազում ե և հեռվից ձայն տալիս.

— Մի հավատալ դրանց, անաստված: Մի քանիսը Քրիստոսին չեն ճանաչում, մյուսները Քրիստոսի վարդապետությունը հեթանոսաբար խեղաթյուրել են: Հավատա Քրիստոսին և սուրբ Լուտերին, վոր մաքրեց յեկեղեցին: Միայն լուտերական կրոնն ե ճշմարիտը, մնացածները՝ սուտ:

Այստեղ արդեն հոգեոր պետերը չհամբերեցին և սկսեցին իրար հետ վիճել: Խաբբին գոտում եր, վոր Մովսեսի հետ աստված ինքն ե խոսել և պատվիրանի տախտակներն ե տվել: Մոլլան այն կողմից՝ աստված Մահմեդի հետ ե խոսել և սուրբ դուրանը յերկնքից ե իջել, և այդ աստվածային գրքի համաձայն յերկրագոր դուրանն ե զրվել: Քրիստոնյաները կանչում եյին, վոր Քրիստոս աստծու վորդին ե, ինքը յերկիր իջափ, նրա աստվածային բերնից գրվել ե ավետարանը սուրբ առաքյալների ձեռքով, և այսպես կատաղորեն վիճում եյին, աղմկում, իրար հայիոյում. քիչ եր մնում, իրար գլուխ ջարդեցին:

Անաստվածը տեսնում ե վոր բանը վատ ե, և ասում ե. — Սուրբ հայրեր, մի՛ կովեք, ավելի լավ ե իմ հարցին պատասխանեցեք:

Կամաց-կամաց հանդարտվեցին և ծանրությամբ ասացին. — Հարցրու:

— Զե՞ վոր աստված մի յե, — ասաց անաստվածը, — կնշանակի՞ նա բոլորին ասել ե Մովսեսի, Մահմեդի և Քրիստոսի միջոցով:

— Աստված մեկ ե, — գոչեցին սուրբ հայրերը:

— Ուրեմն ինչպես, — շարունակեց անաստվածը, — աստված մի յե, իսկ բոլորին տարբեր կերպով ե ասել, այնպես վոր, հավատ հավատի գեմ ե հանել: Դուրս ե գալիս — բոլորն ել իրավացի յեն, բոլորն ել աստծու, աստվածային հայտնության վրա յեն մատնացույց անում, և միևնույն ժամանակ բոլորն ել սուտ են դուրս գալիս, վորովհետև նույն աստծու անունից իրար ժխտում են:

Սոսկացին սուրբ հայրերը, բայց չեցին իմանում թե ինչ պատասխան տան. միայն կաթոլիկը գլմի ընկալի:

— Անաստված, — գոչեց նա, — քո մեջ դեն ե բնակվել, քո միտքը պղտորպել ե:

Սյստեղ բոլորն ել ուրախացան, սկսեցին նրան դիվահար անվանել: Անաստվածը հանգիստ լսեց նրանց նախատինքները և ասաց.

— Յես գեին ել չեմ հավատում, բայց թող ձեր ասածը լինի, թող նա ինձ մոլորեցրած լինի. բայց ձեզ ել քիչ չի հասել, քանի վոր հենց ձեր աստվածը ձեզ շփոթեցրել ե: Ձեզանից յուրաքանչյուրը մյուսի հավատը ստություն ե կոչում և յեկեղեցու պաշտոնյաներին՝ խաբեքաներ, և միևնույն ժամանակ մեկն իր հավատն ե ջատագովում, իսկ տասը հոգին՝ ստություն ու խաբեքայություն են համարում այն: Տեսնում եմ, ձեզնում վոչ մի ճշմարտություն չկա. վոչ մի աստված ձեղ հետ չի խոսել, այլ հենց ինքներդ ուղղակի հնարել եք հեքյաթներ, դեռ աստծուն սատանա յել եք ավելացրել:

Անաստվածը գլուխ տվեց, գնաց իր գործին, իսկ հոգեոր հայրերը, մենակ մնալով, ել ավելի իրար հայիոյեցին, անհաջողությունից այրվելով: Սկսեցին իրար հավատ պարսավել, իրար անհծել, անաթեմա կարդալ, այնպես վոր հրապարակում յեղած ամբողջ ժողովուրդը, անեծք շալակած, հեռացավ, վորովհետեւ տարբեր կրոնի մարդիկ եյին, բոլորին անխտիր բաժին եր հասնում:

Բայց իզուր չանցավ այս հրապարակական վեճը: Շատերը մտածմունքի մեջ ընկան և սկսեցին վորոնել, ուր ե ճշմարտությունը և ինչպես դուրս գալ հակասություններից: Վոմանք

մինչև անգամ առանց յերկյուղ կը ելու տերտերների անեծքից, դժոխքի ու սատանաների սպառնալիքից՝ համարձակվեցին այս առթիվ հարց տալ անաստվածին:

Անաստվածը միայն մի բան եր կրկնում՝

— Սովորեցեք, գիտությունը ձեզ ամեն ինչ բաց կանե, ։

Անցավ բավական ժամանակ, ու անաստվածները գնալով շատացան վոչ միայն այդ քաղաքում, այլ և բոլոր քաղաքներում ու պետություններում: Յեվ ուր վոր ավելի եյին զբաղվում գիտությամբ, այնտեղ մարդիկ ավելի խելացի եյին դառնում, ավելի լավ ապրում, աշխատում և տանջվում մարդկության ողափին, աստծու և սատանայի մասին չեյին ել մտածում, ասես դրանք իսկի յել չկային:

Բայց վ՞րտեղից են առաջացել բոլոր այդ կրոնները և ինչու մարդիկ աստծուն ու սատանային այդպես պաշտպան են կանգնում, ասես առանց նրանց ապրել չեն կարող:

Ահա այս ե վոր հայտնագործել ե, բաց ե արել գիտությունը՝ դիտությունը ցույց ե տվել մարդկանց, թե վ՞րտեղից են աստվածները և սատանաները, մարդիկ ի՞նչպես են պաշտել, յերկրպագել նրանց, ինչու յեն յերկրպագել և ինչ տեսակ-տեսակ ծեսեր են հնարել պաշտամունքի համար: Այս բոլորի մասին, հենց են զլից, ամեն բան կպատմենք կարգով:

## ԻՆՉՊԵՍ ՀԱՅՏՎԵՑԻՆ ԱԱՏՎԱԾՆԵՐՆ ՈՒ ԴԵՎԵՐԸ

Նախքան աստվածների մասին խոսելը, վորոնց մարդիկ յերկրպագում են, մի քանի խոսք ասենք մարդկանց մասին, թե ինչպես են ապրել զանազան ժամանակներում և ինչպես եյին նրանք: Մենք բոլորս ել, որինակ, գիտենք, վոր մոտավորապես հարյուր տարի առաջ մարդիկ այնպես չեյին ապրում, ինչպես այսոր մենք, թեկուզ այն պատճառով, վոր այն ժամանակ չկային սավանակներ, հեռախոս, ելեքտրաքարշ: Իսկ յեթե հինգ հարյուր տարի առաջ վերցնենք, տարբերությունը՝ մեր ու այն ժամանակի մեջ՝ ել ավելի մեծ կլինի: Հինգ հարյուր տարի առաջ մարդիկ գաղափար անգամ չունեյին շոգեմեքենաների

մասին, յերազներում անգամ տեսած չեյին շոգենավեր, յերկաթուղի, ելեքտրական լուսավորություն, սավառնակ: Նույնիսկ նավթի լամպի մասին անգամ չեյին յերազում, ել չեմ ասում, վոր այն ժամանակ տպած գիրք չկար: Մարդիկ շրջում եյին ձիով, ծովի վրա՝ առագաստավոր նավով կամ թիավարելով, տները լուսավորում մարխով, իսկ ավելի հարուստը՝ ճարպե մոմով: Մեծ լուսավորություն լինում եր միայն ամենահանդիսավոր տոներին, յերբ վառում եյին ձեթով լցրած տակառներ: Իսկ յեթե նրանց ցույց տայիր մի մեծ շացուցիչ լապտեր, այդ այն ժամանակ կհամարեյին կախարդություն և կկարծեյին թե վիուկները, հմայելով, ցած են բերել արեւ:

Այսպես, մի անգամ վայրենի աշխարհում մարդակերների ձեռքն են ընկնում յերկու ճանապարհորդ: Պատահմամբ նրանց մոտ գտնվել են բենգալյան կրակներ՝ զանազան գույների, եհրթիոներ: Վայրենիները ուզում եյին ճանապարհորդներին մորթել, խորովել, ուտել, բայց սրանք մտածեցին՝ գիշերը վառել բենգալյան կրակները:

Նախ վառեցին կանաչը, լուսավորեցին ամբողջ շրջակայքը կանաչ լույսով, հետո՝ կարմիրը, ապա՝ դեղինը, կապույտը, իսկ վերջը մի քանի հրթիոներ արձակեցին դեպի յերկինք: Հրթիոները ֆշուցով թռան բարձր-բարձր, վորոտ ու ճայթունով պայթեցին վերեռում ու ցած թափկեցին գույնզգույն աստղիկների պես:

Տեսնելով այս բոլորը, մարդակեր վայրենիները քարացան սարսափից, հետո ծունկ չոքեցին և, ինչպես աստծու, յերկրպագեցին ճանապարհորդներին: Այդ որվանից անխոս հնազանդվեցին նրանց և տարան հացըրին, ուր վոր նրանք պիտի գնային, տալով նրանց աստվածային պատիմներ, հոգալով նրանց կերպակուրը:

Ահա այսպիսի վայրենիներ եյին մարդիկ հազարավոր տարիներ առաջ: Այն քարե շրջանում, յերբ մարդկանց բոլոր զենքերը քարից եյին, մարդիկ կրակ հանում եյին փայտերը իրալ շփելով (քսելով), և ապրում քարանձավերում:

Մի այլ կարևոր հանգամանք ել պետք ե հիշել: Մենք այսոր ապրում ենք բնության շատ յերեսույթներից անկախ:

ունինք տուն, հագուստ, վառարան, ճրագ։ Զմեռը սենյակում դպում ենք ամառվա նման, վառեցիր վառարանները — և տաք ե, դիշերը վառում ենք ճրագը — և լույս ե։ Ուզենք՝ ցերեկը կաշ-խատենք, ուզենք՝ դիշերը։ Հարկավոր ե 20 վերստի վրա մեկի հետ խոսել, վեր կառնենք հեռախոսի փողը և կխոսենք, կամենանք լուր տալ մի ուրիշ յերկիր, թեկուզ Ամերիկա, — հեռագիր կուղարկենք և հաջորդ որը պատասխանը կստանանք։

Այդպես չեր քարե դարում վայրենի մարդու վիճակը։ Գիշերը խարույկից զատ բան չուներ, իսկ ձմեռը սիստի չվեր տաք տեղեր, տարափոխիկ թռչունների նման։ Ազրում եր վորսով, իսկ վորս չճարելիս՝ սոված եր մնում կամ չվում մի այլ տեղ, ուր վորս կար։ Վառարանի մասին դաղափար անդամ չուներ. չուներ վոչ սեղան, վոչ թախտ, վոչ պտուկ, վոչ ասեղ։ Չունեյին հաստատուն տեղ, այլ զայլերի վոհմակի նման թափառում եյին վայրենի մարդիկ ու միայն մի բանի մասին եյին մտածում — վոհրանդից կերակուր ճարեն։

Մի խոսքով, ինչպես այժմվա վայրենին, առաջվա մարդն ել ամեն բանում կախում ուներ բնությունից, վորը ամառը նրան փաղքուշ եր ու քաղցր, իսկ ձմեռը՝ խիստ ու դաժան։ Ամառը վայրենիները կուշտ եյին և տաք, ձմեռը՝ սովում եյին ու փետանում։ Ամառը բերում եր յերջանկություն, իսկ ձմեռը՝ դժբախտություն։ Բացի այս, խավարը խիստ սարսափեցնում եր նրանց, վորովինետե խավարում նրանք վոչինչ չեյին տեսնում, իսկ բոլոր սարսափելի գաղանները դիշերն են հարձակվում նրանց վրա։

Դրա համար ել մարդիկ, ամենահին ժամանակից, ավելի պատվում եյին արել, վորովինետե արել նրանց տաքացնում եր և իր լույսով հալածում սարսափելի խավարը։ Ինչպես վայրենի մարդիկ, նրանք այն ժամանակ դեռ չեյին հասկանում բնության ուժերը, և ինչպես այն վայրենիները, վորոնք, վախենալով հրթիռներից, ճանապարհորդներին աստծու տեղ դիին, այնպես ել առաջվա վայրենիները, վախենալով խավարից, դիշերը (խավարը) սարսափելի աստված համարեցին։ Իսկ արել, վոր հալածում եր խավարին և խավարի չար վողիներին, այսինքն սարսափելի գաղաններին, համարեցին բարի աստված։

Այս հավատը դեռ անորոշ սակայն այժմ ել պահպում ե ժողովրդի մեջ։ Խավար մարդիկ այսոր ել կարծում են, վոր մինչև կես դիշերը յերկրի վրա թափառում են գերեր, բայց հենց վոր աքաղաղը կանչում ե, այսինքն հենց վոր դիշերը վերջանում ե, սկսում ե լույսը բացվել, բոլոր չարիքներն ել ոլանում են դեպի դժոխք։ Իսկ աքաղաղները կանչում են արևածագից առաջ, այսինքն հայտարարում են բարի աստծու վերադարձը։ Այսպես, մեր գյուղական հավատալիքը, վոր աքաղաղների կանչով ցրվում են չարքերը, կապված ե մարդկանց շատ հին հավատալիքի հետ բարի աստծու մասին, վոր հալածում ե դիշերվա չար վոգիներին։

Գիտնական մարդիկ, ուսումնասիրելով զանազան վայրենի ու հին ժողովուրդների կյանքն ու սովորությունները, այս յեղանակով են բացատրել շատ բաներ այն սնոտիսապաշտություններից, վոր դեռ պահպում են խուլ գյուղերում, խավար մարդկանց մեջ, Սնոտիսապաշտությունների մասին մենք կխոսենք հետո, իսկ այժմ պատմենք, թե ինչպես մարդկանց մեջ հայտնվեցին աստվածներն ու սատանաները։

Ամենից առաջ նախնական վայրենուն ապշեցնում եր այն, վոր մարդիկ մեռնում են։ Մարդը չնչում եր, շարժվում եր, աղաղակում, ծիծաղում, վորս եր անում, բայց ահա պախրան (յեղջերուն) հարվածեց յեղջյուրով, արյունը թափվեց մարմնից, — և նա ընկալ, սկսեց թուլանալ, ապա բոլորովին դաղարեց շարժվելուց ու խոսելուց, միայն թե շնչում ե։ Բայց ահա նրա կըրծքից թուավ վերջին հառաչը, և կյանքը վերջնականապես թողեց մարմինը։ Վիրավորը շունչը փչեց։

Նախի մարդը այս նկատել ե և վորոշել, վոր շնչառությունն այն ե, ինչ վոր ապրում ե մարմնի մեջ։ Նա, իհարկե, չգիտեր, վոր մենք ող ենք շնչում, նա կարծում եր, թե մարդու մեջ կա վողի, վորը, քանի մարդը կենդանի յե, շարունակ բերնից ու քթածակերից փչում ե, իսկ հետո թողնում ե վերքերից ու ծերությունից ապականված մարմինը և ապրում ե անմարմին։ Այս շունչը նա անվանեց հողի։ Դիտելով աստկող կենդանիները, նախի մարդը համովզեց, վոր մահվան ժա-

մանակ նրանից դուրս ե գալիս շունչը, ուրեմն նրանք ել հոգի ունին: Մարդ հաճախ յերազում տեսնում ե իր մեռած աղդականներին, սպանված թշնամիներին կամ սպանված սարսափելի գաղաններին, և վորովհետեւ նա հավատում եր, վոր մարդկանց ու կենդանիների հողիները ապրում են առանց մարմնի, ուստի նա յերազից հետո ասում եր, թե զիշերը նրան այցել ել եր հոր, առաջնորդի կամ թշնամու վորին, կամ գաղանի վորին՝ արջի կամ ոձի: Միևնույն ժամանակ մի քանի վորիներ նրան հարազատ են, ուստակար, իսկ մյուսները՝ չար և մասակար, ինչպես եյին կյանքում:

Ուստի նա հավատում եր, ինչպես այժմ ել հավատում են վայրենիները, վոր յերկրի յերեսին ապրում են անտեսանելի՝ բոլոր մարդկանց և կենդանիների վորիները, թեև այդ մարդկանց և կենդանիների մարմինները մեռել են, վայրենիները ամեն բան չափում են իրենց արշինով, ուստի չարն ու բարին նրանք ընդունում են իրենց ձեռի՝ վայրենաբար: Վայրենին ասում ե. յեթե յես եմ գողացել, այդ լավ ե, իսկ յեթե ինձնից են գողացել, այդ վատ ե. յեթե յես եմ սպանում, այդ լավ կլինի, իսկ յեթե ինձ են սպանում, այդ վատ ե: Ուստի վայրենիները համարում են բարի այն, ինչ վոր նրանց ոգուտ ե բերում, իսկ չար՝ այն ամենը, ինչ վոր իրենց ձեռնտու չե:

Ուրեմն նրանք ամբողջ բնությունը բաժանում են բարու և չարի: Իր ցեղի մարդիկ բարի յեն, ոտար ցեղինը՝ չար լույսն ու ջերմությունը բարի աստվածներ են, ցուրաը և խավարը՝ չար աստվածներ են, դմեր. տաք հողմը՝ բարի աստված ե, ցուրտ հողմը՝ չար աստված. լուսինը, թեև աղոտ, բայց լուսավորում ե զիշերը, ուստի նա աստված ե, թեև վոչ այնպես բարի, ինչպես արել, բայց ելի աստված ե. ամպրոպը ոգուտ չի տալիս, բայց վորոտը սարսափեցնում ե, իսկ կայծակը կարող ե սպանել, ուստի ամպրոպը նույնպես աստված ե, բայց սարսափելի, չար, ահեղ աստված. վորեւ բարկացած վայրի յեղ կամ յեղջերու զարհուրելի յեն, նրանց սպանելը դժվար ե, բայց նրանց միաը մարդկանց համար սնունդ, իսկ կաշին հագուստ կլինի, յեղջուրները և վոսկորները լավ զենք կլինեն,

ուստի այդ կենդանիները թե չար են և թե միաժամանակ քարի: Նրանք թեև ավելի կրտսեր աստվածներ են, քան արել, բայց դարձյալ աստված են. կրակը շատ ոգտակար ե մարդուս. խավարը ցրում ե, տաքացնում ե, ահոելի գաղաններին հալածում, ուստի նա ել շատ բարի աստված ե. նա արելին և նման, ուստի նա արելի վորդին ե:

Այս բոլոր աստվածները, ինչպես և մարդը, կենդանիները — հոգի ունին: Նրանք բոլորն ել մի բանով կերակրվում են, մասնավանդ կրակը, վոր այն ժամանակ ե միայն ապրում, յերբ ծառ և ուտում, ցախ ու խոփի. յերբ նա ուտելու բան չունի, այն ժամանակ հոգին փչուռ ե և հանգում: Բավական ե վոր չոր փայտերը իրար քսեն կամ ածուխը փշեն և ցախ գցեն վրան, իսկույն կրակի հոգին կդա, կմարմնավորվի, կբորբոքվի և կսկսի ազանաբար լափել ցախը:

Այսպես, այն միտքը, վոր ամեն մի եյակ հոգի և մարմին ունի, բերում ե վայրենուն այն հավատին, վոր ջուրն ել հոգի ունի, յերկինքն ել, յերկիրն ել, ծառերն ել, սարերն ել հոգի ունին, և ընդհանրապես ինչ վոր իր շուրջը տեսնում եր վայրենի մարդը, բոլորի մեջ ել հոգի յեր ընդունում: Մարդկանց մեջ այսպես առաջացավ բազմաստվածությունը, վոր բոլոր հեթանոս կրոնների մեջ ել այժմ կա. իսկ քրիստոնեական կրօնի մեջ թեև այդ աստվածները չեն ընդունված, բայց և այնպես զրանց ելի հավատում են: Անտառի աստվածը՝ այդ նահապետն ե, յերբեմն և ձորերի և լեռների աստված, շատ անդամ ոձակերպ. Ջրի աստվածը՝ ալ կամ ալք, վոր մանուկներին մոր արգանդում փչացնում ե կամ ծննդաբերությունը դժվարացնում. տան աստվածը — քաջքեր, տան պահապաններ, վոր լինում են յերբեմն ոձի կերպարանքով, յերբեմն կարճահասակ թղուկների, յերկար մորուքով. զանազան «զրողներ»՝ յերբեմն բարի, յերբեմն չար վորիներ, մարդկանց հոգին առնող: Բացի այս, խավար ամբոխը դեռ շարունակում ե հավատալ մարդագելերին, վհուկներին, չարագուշակ թոշուններին (բույերին), կենդանիներին (շան վոռնոցը, հավի աքաղաղի պես կանչելը, և կատու և այլն):

Այս դեռ քիչ ե. քրիստոնեական կրոնը փոփոխել և ընդունել ե շատ հեթանոս աստվածներ, հատկացնելով նրանց պաշտոնն ու կոչումը քրիստոնեական սրբերին և սրբավայրերին։ Այսպես, հին հեթանոսական «ամպրոպային» Արամագդը, վորշանթ ու վորոտով հալածում եր չար վոգիներին, փոխարինվել ե Յեղյա մարգարեյով, վոր հրեղեն կառքով արշավում ե թուխպերի վրայով և անձրև թափում։

Հին հայոց զանազան աստվածների պաշտոնը տրված ե այս կամ այն սրբին, կամ մի քանի պաշտոններ մի սրբի կամ սրբավայրի, յերեմի՝ ընդհակառակը։

Այսպես, աստվածամորը հատկացրած են ծննդականներին հովանավորողի պաշտոնը, անբուժելի վերք («տիրամոր յարա») բժշկելու զորություն, առհասարակ կանանց հովանավորող. Փարպու կուսավորիչը՝ կատաղած շան կծածից փրկող. ս. Հակոբը և Փութկա (Մուղնու) ս. Գեորգը՝ չբեր կանանց զավակ պարզեցող, ս. Կարապետը՝ աշուղների ու լարախաղացների հովանավորող և յերիտասարդների մուրազը կատարող. ս. Սարգիսը՝ բջաբեր ձիավոր և միենույն ժամանակ սիրահարներին յերազում «դիլակը» հայտնող. ս. Գեղարդը՝ ժանտախտի, յերաշտի և այլ աղետներ փառատող. «Մարկոս ավետարան» վանքը (Մուրմ. գավ.) ընկնավորներ բժշկող. ս. Հակոբը՝ արտերը մորեխից պահպանող. Ծաղկեվանքը (Արայի լերան պատուածքում) աչքացավ և ծաղիկ հիվանդություն բուժող և այլն, և այլն. Զափազանցություն չի ինիլ ասել, վոր ամեն գյուղ ու քաղաք այս տեսակ սրբեր, սրբավայրեր, խաչքարեր, պատկերներ, ավետարաններ, թուխմանուկներ և այլն ունի։

Հին ոռոսաց Վելասը կամ Վոլոսը (ընտանի անասուններին հովանավորող աստվածը) իր հողսը հանձնել ե ս. Վլասին. Ջրային և ծովային աստծուն, վորին աղոթում ելին ծովադնացները, փոխարինել ե հաճկատար-Նիկոլայը. Ժողովրդի հավատալիքները հին աստվածները փոխարինել են քրիստոնեական սրբերով։ Ֆյոդոր Ստուդիաը յերկիրը սառեցնում ե (հունվ. 30). Նիկոլայն պահպանում ե հրդեհից ու կայծակից (հունվ. 31). Վարսակ ցանձլա աղոթիր Յերեմյային (մայիսի 1). Լավքենտիոսը՝ աչքացավի բուժիչ. Վասիլին՝ վոչխարներին բուրդ տվող և այլն, և այլն։

Այս ամենը վերցրած են ժողովրդական սրբերից. Բայց յեթե մանրամասն ուսումնասիրելու լինինք ժողովրդական կյանքի այս կողմը, այն ժամանակ պարզ կտեսնենք, վոր բոլոր սրբերը կապված են տարվա յեղանակների հետ՝ գարնան, աշնան, ամառվա և ձմեռվա. յերկրորդ՝ ամեն մի գյուղական աշխատանք և զյուղական տնտեսության յուրաքանչյուր ճյուղ ունի իր հովանավորող սուրբը. յերրորդ՝ սրբեր կան, վոր բժշկում են այս կամ այն հիվանդությունը. չորրորդ՝ սրբերից շատերը հատկացված են ընտանեկան կամ հասարակական կյանքի դեպքերին. Վումանք հովանավորում են հարսանիքները, ուրիշները՝ ծնունդը, մյուսները՝ գողերից են պահպանում. կան հարսառություն պարզեցող, կան արբեցողության, զեղիսության թշնամիներ և այլն. բոլորը հաշվել չի կարելի։

Մրան դեռ շատ անգամ կղառնանք մեր գրքում. այժմ միայն ասենք հետեւյալը: Ինչպես այսորվա վայրենիները, ինչպես նախկին վայրենի մարդիկ, այնպես ել խավար քրիստոնյաները բնության զանազան յերկույթները (լույսը, վորոտը, անձրելը, հիվանդությունը) վերագրում են առանձին աստվածների կամ սրբերի: Մի խոսքով, ինչ վոր կատարվում է մարդու շուրջը, անկախ նրա կամքից ու ցանկությունից, նա այն վերագրում եր ուրիշ գերազույն եյակների աստվածների և սրբերի՝ կամքին ու ցանկությանը։

Այսպես, մարդիկ, դեռ խոր հնության մեջ, ցրտից, լույսից, հողմից, ջերմությունից, կրակից, գազաններից, անտառներից, լեռներից, զետերից ու ծովերից իրենց համար աստվածներ են ասեղծել ու նրանց յերկրպագել։ Ահա թե ինչու այսոր ել աշխարհի բոլոր կրոնների մեջ աստվածներն ու դմերը պատկերանում են թուչնի թերերով, կամ յեղջյուրներով և զագանի դեմքերով։ Դրա համար ել աստված ամեն տեղ հայտնվում է լուսո մեջ, վորոտ ու կայծակով, այրում է կրակով, շրջապատած է ամպերով։ Մի խասքով, յերկնային և յերկրային յերկույթների մեջ ինչ վոր ահարկու և անըմբունելի յեր (յերկրաշարժ, արեի ու լուսնի խավարում, զիսավոր աստղեր և այլն), այդ ամենը համարվում եր աստվածային ու բոլորի մեջ ել աստծու մատն եյին տեսնում։



Յեթե մենք մեր որերից դեպի ժամանակի խորքը զառնանք, կտեսնենք, վոր լույսն ու կայծակը, յերկրաշարժը և խավարը, հողմը, կրակը և ցուրտը, վորոտն ու խաղաղությունը դուգորդված են միշտ աստծու հայտնվելու հետ։ Քրիստոս պատկերանում եր շացուցիչ լուսո մեջ, իսկ յերբ նա մեռավ խաչի վրա, մըրիկ բարձրացավ, յերկրաշարժ, խավար, վորոտ, կայծակ, բոլոր սրբերը — վոսկի պսակով, լուսարձակ և բոլորակ, ինչպես արեն ե. հրեից աստվածը, Յեհովան, Մովսեսին հայտնվում եր վորոտ ու կայծակի մեջ. նրա հայտնվելուց առաջ հողմն ու ցուրտն եր անցնում, մորենին վառվում, բայց չեր այրվում։ Հին հեթանոս աստվածահաճո զոհերի վրա յերկնեֆից կրակ եր իջնում և այրում այն. յեթե նախնի մարդիկ իրենք եյին զոհ մատուցանում և իրենք ել կրակը վառում, այն ժամանակ աստված նշաններ եր տալիս — ընդունում եր զոհը թե վոչ, և հողմը զոհի ծուխը սփռում եր յերկրի յերեսին (ինչպես կայենի մասին պատմվածքում, ո. գրքի մեջ, կամ ծուխը բարձրացնում եր յերկինք, ինչպես Աբելի մասին պատմվածքում):

Այսպես, բոլոր աստվածները կապված են բնության յերեփույթների հետ, ուստի և, իհարկե, մարդը նրանց ոժաել և այն բոլորով, ինչ վոր տեսնում եր իր շուրջը և ինչով վոր հարուստ ե յերկրավոր բնությունը։ Վոր այս ճիշտ ե, կհամոզվենք՝ քննելով հեթանոս կրոնների աստվածների և դեերի պատկերները։

Սկսենք ամենապատվավոր աստծուց — արեի աստծուց։ Արդեն առաջ ասել եյինք, վոր հին վայրենի ժողովուրդները ամենից առաջ սկսեցին պաշտել արել, վորովհետեւ նա տալիս եր լույս և ջերմություն, հալածում եր խավարը և ահարկու գաղաներին։ Նա մարդկանց ամենաբարի աստվածն եր, ինչպես և բոլոր յերկրի, — սրա արոտներով, անտառներով, գաղաններով և թռչուններով։

Նա ուրախ աստված ե, որհնված, լուսաշող։ Սկզբում նրան վոչ մի կերպ չեյին պատկերացնում, բայց աղոթում եյին առավտաները, վողջունելով սաղմոսներով և գոհանալով այն բանի համար, վոր յերևացել և ու իր բարիքն ե շնորհում մարդկանց։

Յերեկոյան նրան վերառաքում եյին աղոթքներ, խնդրելով, վոր չթողնե ընդմիշտ յերկինքը, այլ ելի վերադառնա։ Ասիայի ամենից հին ժողովուրդը դիմում եր նրան այսպիսի աղոթքով, վոր զտել են փորազրված մի քարի վրա և վորը սկսվում եր այս բառերով. «Լուսույն խաղաղ սուրբ փառաբանություն»։ Նա խաղաղ և կոչվում՝ հակառակ ամպրոպի կրակին ու կայծակին և հրաշունչ լեռներին։

Ապա սկսեցին արել պատկերացնել շրջանի կամ փայլի ձևով։ Բայց արել անցնում ե յերկն-


քով, կարծես թռչում ե յերկնքով, ուստի սկսեցին պատկերացնել թեավոր. այսպես եյին նկարում յեզիպտացիք Աֆրիկայում (նկ. 1)։

Շատ տարի հետո մարդիկ սկսեցին համարել, վոր տեսանելի արել աստված չե, այլ միայն աստծու անձը, ուստի սկսեցին արել համարել աչքը, ակն աստծու, իսկ ինքը, աստված — անտեսանելի յե։ Անտեսանելի արեի աստծուն սկսեցին պատկերացնել մարդակերպ։ Այսպես, Ասիայի մի հին ժողովուրդ, մեղացիք, պահպանել են իրենց պատկերների մեջ արել լուսապահ (շրջապահ), իսկ իրեն, արեի աստծուն, մեղացի աբքայի կերպարանքով և արքայական զգեստով (վոր որհնում ե յերկիրը), իսկ թեերը պահել են, բայց արդեն կողյուն ասպիտակ վրա (նկ. 2)։

Ավելի ուշ հայտնված ժողովուրդները, ինչպես, որինակ, հին հույները, յերբ դեռ հեթանոս եյին, արեի աստծուն պատկերացնում եյին գեղեցիկ պատանու պես և նրա արձանը կերտում եյին սպիտակ մարմարից։



Նկ. 1. Թեավոր արել



Նկ. 2. Մեղացիք այսպես եյին պատկերացնում աստծուն դեռ կողյուն ասպիտակ վրա (նկ. 2)։

Նույնպես աստված Եյին համարում բնության մյուս յերեվույթները, որինակ, հողմերը։ Հողմերը հին Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների համար մեծ դեր Եյին խաղում, ինչպես — Յապոնիայում։ Ասիայում և Աֆրիկայում տաք, կիզիչ փոթորիկներ են լինում, վորոնք ավազով են ծածկում ամբողջ գյուղեր, արոտ ու ծառեր չորացնում։ Լինում են և սառը հողմեր, վարար անձրեներով, վորոտ ու կայծակով. լինում են և տաք, հաճելի հողմեր։ Յև վորովինետև քամին կարող ե կորուստ կամ ուրախություն բերել, ուստի և հողմի աստվածը պաշտվում եր. նրան աղոթում Եյին։ Յեվ վորովինետև հողմը շարժվում ե և վիչում, ասես թուչում ե, ուրեմն հողմի աստվածը, ինչպես և արեի աստվածը, հների հասկացողությամբ, պետք ե լիներ թևավոր, և հենց այդ թևերի փելուց առաջանում ե փոթորիկ, կամ մեղմ քամի։ Մինչև մեր որերը հասած ե քաղցեացոց հողմերի աստծու մի արձանը, կուռքը։ Քաղցեացիք նույնպես ապրում եյին Ասիայում, ինչպես և մեղացիք, մի ժամանակ — մինչև անգամ միասին, ուստի և քաղցեական հողմի աստվածը (նկ. 3) նույնպես պատկերացնում եյին մարդու կերպարանքով ու թևավոր, ինչպես հունաց արեի աստվածը։



Նկ. 3. Քաղցեացոց հողմ-աստվածը

Ապացույց այն բանի, վոր հեռավոր ժամանակների հեթանոսները պատկերացնում եյին իրենց աստվածները ողտակար կամ մասսակար գաղանների ու թուչունների կերպարանքով, կամ իրենց ցեղի կամ ուսար թշնամի ցեղի կերպարանքով, ծառայում են մեզ հասած պատկերներն ու կուռքերը։

Այսպես, յերբ քաղցեացիք և հին ասորեստանցիք արեի աստծուն դարձրին իրենց գլխավոր աստվածը և սկսեցին պաշտել նրան, ինչպես յերկնային աստծուն, այն ժամանակ նրա իշխանության տակ դրին կրտսեր աստվածներին և նրան ծառայության տվին հրեշտակներ, վորոնք կոչվում են (հունարենից թարգմա-

նելով) «համբավաբերներ»։ Այս հրեշտակները պետք ե արագ թուչեյին յերկիր և հայտնեյին զանազան տեղեր աստծու կամքը. ուստի նրանք պետք ե թուչեյին, ինչպես թուչուններ։ Շատ հին ժամանակներում, արագ շարժման համար՝ ձիուց, յեղջերույից և թուչունից արագաշարժ վոչինչ չկար, իսկ բոլորից արագ ոլանում ե թուչունը, այն ել վոչ միայն յերկրի վերևով, իսկ արծիվը, որինակ, ապրում ե բարձր սարերի վրա, բարձրանում է ամպերից վեր։ Հին մարդիկ կարծում եյին, վոր այնտեղ, ամպերից բարձր, լեռների կատարներին, ապրում եյին աստվածները։ Ուստի, հին հունաց Զևսը (վորին հին հումեացիք անվանում եյին Յուպիտեր), վորոտի և կայծակի աստվածը, բացի հրեշտեն նետերից, ուներ համբավաբեր-արծիվներ։ Հայոց աստվածների հայրը, Արամազդը, նույն շանթագոռ աստվածն եր, ուներ իր համբավաբերները՝ հրեշտակներ։

Ասորա - քաղցեացիք նույնպես, ինչպես ասացինք, հատկացը ել եյին յերկնային աստվածներին համբավաբերներ, բայց սրանք միայն արծիվներ չեյին, այլ մարդակերպ, միայն զլուխն ու թևերը արծիվի։ Նրանք բարի վողիներ եյին, հրեշտակներ, աստծու կամքը հայտնողներ։ Նրանք պատկերանում եյին այնպես, ինչպես ցույց ե տալիս 4-րդ նկարը։

Քաղցեական հրեշտակի ձեռին լինում եր յեղենու կամ հացենու կոծիծ։ Սա պարզ ապացույց ե, վոր հրեշտակը իջել ե յերկնքից,



Նկ. 4. Ասորա-քաղցեական բարի վողին (հրեշտակ)

այսինքն սուրբ սարերից, ուր ապրում են աստվածները։ Ինչպես ասացինք, հին ժողովուրդները ձգտում եյին դեպի տաք յերկրներ և այնուղե ապրում, վորովհետեւ զեռ չգիտեյին ցրտի հետ կովել։ իսկ տաք յերկրներում յեղնի և հացենի չեն աճում, այլ միայն բարձր լեռների ձյունեղեն գաղաթների մոտ։ Ուստի և հին հավատացող հեթանոսը չեր կասկածում, վոր յեթե հրեշտակը ձեռին կոծիծ ունի, նա աստծու առաջալն է. չար վոգին յերկինք չի կարող յելնել, ուրեմն չի յել կարող յեղենու կոծիծ վերցնել։


Չար վոգին ապրում եր միայն յերկրի վրա կամ գետնի տակ, ուր նրան հալածել են լուսավոր աստվածները. ուստի, դեմ կամ չար վոգու պատկերը կազմում եյին կենդանիներից, գաղաններից, վորոնք ապրում եյին յերկրի վրա։ Ճիշտ, նա ել թոշնիթներ ուներ. դեռ վասում եր մարդկանց, ինչպես սարսափելի առյուծ, ուստի նա ունի յերկու առյուծի թաթեր. նա կարող է հարու տալ, ինչպես կատաղի յեղը, ուստի յեղյուրներ ել ունի. կարող է հոշուել մազիններով, ինչպես ուրուր. ուստի նրա յերկու թաթերն ել գիշատիչ թոշնի յեն։ Այսպես եյին պատկերացնում մեղացիք դեմ (նկ. 5):

Հենց այդ յերկրներում (Ասիա, Աֆրիկա) ապրում եյին, ինչպես և այժմ, այնպիսի հրեշներ, ինչպես են՝ կոկորդիլոսը, ահազին ոձեր, վիշապներ։ Հին վայրենիները դեռևս կարող եյին խմբովին նիվակներով, նետերով սպանել թե առյուծ, թե արջ, թե վայրի յեզ, վորովհետեւ այն գաղանների կաշին, մարմինը փափուկ եւ կարելի յե թե նիզակ, թե նետ ցցել։ Համարյա անկարող եր վայրենին կովել վիշապների, թունավոր

ոձերի հետ։ Ոձերը կուիի չեն յելնում խմբի հետ, այլ թագի կացած ծառերի վրա, ջրի մոտ, յեղեգնուտում, խիտ թփի կամ արոտի մեջ բուսը պահում և սպանում են մարդկանց։ Իսկ ահազին վիշապները ողակների մեջ են առնում զոհը, ջարդում վոսկորները, ապա կուլ են տալիս մարդուն ամբողջապես, ինչպես իշերը՝ զորտեր։ Բայց ել ավելի սարսափելի եյին հնում կոկորդիլուները ահազին յերախներով, յերկար ատամներով, վոր հեշտությամբ ուստում եյին մարդուն։ Կոկորդիլուները ապրում են գետերում, լճերում, բայց միշտ ափն են դուրս գալիս, վազում գետնի վրա։ Նրանք նման են ահազին մողեսների և կարող են կուլ տալ մարդուն։ Նրանք ծածկված են այնպիսի պինդ պատյանով, վոր կապարե գնդակը չի ծակիլ, ուր մնաց նետն ու նիզակը։ Կոկորդիլոսի հախից առյուծն անգամ չի կարող գալ։ Պոչի մի հարվածով կոկորդիլոսը կարող է ցած գլորել յեզանը, փշրել նրա վոսկորները։ Այժմ կոկորդիլոս սպանում են պայթուցիկ գնդակով, այն ել վոչ միշտ միանգամից հնարավոր ե սպանել։

Հասկանալի յե, թե ինչ սարսափի եյին ազգում հին մարդկանց վրա այդ հրեշ կոկորդիլուները և ոձերը։ Նրանց հետ կովել չեյին կարող, ուստի և համարում եյին չար աստվածներ և զիմում եյին աղոթքներով, վոր ինսայեն իրենց, զոհ եյին մատուցանում, վոր նրանց սիրտը շահեն։ Մի խոռքով, վարվում եյին այնպես, ինչպես և մյուս գեպքերում, յերբ գաղանները կամ բնության յերեռոյթները՝ բարի կամ չար՝ իրենցից ավելի ուժեղ եյին։

Այսպիսի ուժեղ գաղանների պաշտամունքը պահպել ե յեղիստացոց պատկերների և կուռքերի վրա։ Թերե քաղաքի ավերակների հին տաճարներում պատի վրա մի ոձ-դիցուհու



Նկ. 5. Այսպես եյին մեղացիք պատկերացնում դեմ



Նկ. 6. Թերե քաղաքի ոձ-դիցուհին

նկար պահպած եւ թե այդ դիցուհի (աստվածուհի) յեւ, յերեսում  
ե դիմի վերեկ ճաճանչից և լանջապահնակներից (նկ. 6):

Ավելի սարսափելի կոկորդիլոս շինվում եր կուռքի տես-  
քով, քարից, և կոչվում եր աստված-Սոբկու, իսկ կենդանի  
կոկորդիլոսը համարվում եր սրբազն կենդանի (նկ. 7): Յեթե  
մեկը հին Յեգիպտոսում փորձեր մշամել այդ կենդանիներին,  
նա ժողովրդի թշնամին համարվեր, վորովիետե նա կզայրացներ  
Սոբկու աստծուն, և կոկորդիլոսները մարդկանց չեյին խնայիլ:

Զարհուրելի և մնասակար կենդանիներից զատ, կային մարդ-  
կանց համար շատ ոգտակար կենդանիներ, մանավանդ, վորոնք  
ընտելացել եյին. այսպես՝ շունը, յեղը, կովը, վոչխարը, ձին,  
վորովիետե վայրենի մարդը — ինչ վոր ոգտակար եր՝ բարի յեր  
համարում, իսկ մնասակարը՝ չար, ուստի ընտանի կենդանիները



նկ. 7. Սոբկու աստվածը (կոկորդիլոս)

բարի եյին, և նրանց հովանավորում եյին լուսավոր աստված-  
ները: Աստվածները նրանց գնահատում եյին, ուստի և այդ-  
պիսի զոհերը սիրում եյին, յերբ նրանց սեղանն եյին հանվում  
հորթ կամ գառը և ի պատիվ նրանց մորթում: Այդ պատճառով  
ել հենց այդ կենդանիները համարվել են և համարվում են  
սուրբ, և նրանցից շատերին մարդիկ մինչև անդամ յերկրագոտում  
եյին ինչպիս սրբություն, վորովիետե նրանց աստված այցե-  
լում եւ ուղարկում ե նրանց սուրբ շնորհ:

Մենք աստվածաշնչից գիտենք, վոր հրեաները անապատում  
իրենց թափառելու որերին պաշտում եյին վոսկե հորթը, իսկ  
յերբ չար ոձերը հարձակվեցին նրանց վրա, Մովսեսը ինքը  
շինեց չար աստված, պղնձե ոձ, և ով նայում եր պղնձե ոձին,  
բժշկվում եր թունավոր ոձի խայթոցից: Այս աստվածներին,  
յեզան կամ հորթին ու ոձին, յերկրագոտություն տալը հրեաները

ընդունել եյին յեղիպտացիներից, վորոնք ունեյին մի աստված,  
Ապիս անունով, վոր յեղան պատկերով եր, յեղջուրների վերևը  
լուսապակով, վոր իջում եր նրա վրա հրեղեն լեզվով (նկ. 8):

Մենք գիտենք թե ինչ դեր եր  
կատարում կրակը մարդկային կյան-  
քում: Ինչպես արեց լուսավորում եւ և  
ատքացնում յերկիրը, այնպես ել  
կրակը լուսավորում ու ջերմացնում ե  
մարդու բնակարանը: Հնում մարդիկ  
պաշտում եյին կրակը, ինչպես արեց:  
Նրա աստվածը արեւաստծու վոր-  
դին եր: Այս հայր աստված-արեց  
ուղարկել եր իր վորդուն, Ագնի աստծուն, վոր բարիք աներ  
մարդկանց, ցրեր խավարը, հալածեր չարացած գազաններին ու  
վոգիներին, փրկեր մարդկանց դեերից, բնակարանի մոտ պահա-  
պան կանգներ, ինչպես հրեղեն սյուն, վոր գնում եր անապա-  
տում հրեաների առաջից: Բացի այս աստծուց, աստվածորդի

Ագնից, մարդն ուներ գազանների ու  
թշնամիների դեմ մի լավ պաշտպան և  
վորսի ժամանակ հավատարիմ ոգնա-  
կան — շունը: Ուստի հնում շներն ել  
սուրբ եյին, իսկ սատկած շների հոգի-  
ները դառնում եյին բարի վոգիներ:  
Յեգիպտացոց մեջ մեռելների կրտսեր  
աստված Անուբիսը պատկերանում եր  
շան գլխով (նկ. 9), վորովիետե հան-  
դերձյալ աշխարհում պահպանում ե  
մարդկանց հոգիները և, ինչպես գամփուը  
արածացնում ե վոչխարների հոտը,  
այնպես ել նա առաջնորդում ե մեռել-  
ների հոգիներին դեսպի ահեղ դա-  
տաստան:

Նա առաջնորդում եր հոգիներին ամբողջ սանդարամետքով  
և բերում մեռելների գլխավոր աստծու՝ Ոզորիսի գատաստանին



նկ. 8. Ապիս աստվածը




նկ. 9. Անուբիս աստվածը

և մի ուրիշ աստծու Գորոսի հետ՝ կշեռքով կշռում եր մեռելների չար ու բարի գործերը (նկ. 10):

Շների պաշտաման հետքերը մնացել են մինչև այսոր մահմեդական կրոնի հետևողների մեջ, թյուրքերի և պարսիկների մեջ։ Թյուրքիայում և Պարսկաստանում շներին չեն ծեծում։ Շատ ժամանակ չե, վոր թյուրքաց մայրաքաղաքը, Կ. Պոլիսը, լիքն եր շներով, վորոնք քնում եյին մայթերի վրա, իսկ անցորդները պիտի այնպես շրջեյին, վոր նրանց քունը չխանգարեյին։

Իսկ հին Պարսկաստանում, ինչպես զրված ե պարսիկ սրբազն զրքերում, շներին պաշտում եյին կրակի աստծու հետ



Նկ. 10. Հորոս աստվածը

վոգուն, վորոնք կուզենային մարդու հոգին քարշ տալ դեպի դժոխք։

Ահա ինչու ուղղափառ կրոնի մեջ շունը համարվում է պիղծ, վորովհետև քրիստոնյաները նրա մեջ հեթանոս աստծու պատկերն են տեսնում, իսկ բոլոր հեթանոս աստվածները համարվում են դեեր։ Սակայն բոլոր հեթանոս աստվածները չեն մերժվել քրիստոնեությունից։ Այսպես, մինչև այսոր պատկերացնում են ավետարանիչներին՝ մեկին հերշակի հետ, մյուսին՝ արձվի, յերրորդին առյօնի, չորրորդին՝ յեզան (նկ. 11)։

Մինչև այսոր հայ ժողովրդի մեջ մնացել են կատուի պաշտաման հետքերը։ Հայ գյուղացին մեղք է համարում կատու սպանելը, և տվել է նրան քրիստոնեական սրբության բնույթ։ Նա կատուն համարում է Քրիստոսի թաշկինակը։ Կատուն, վոր

մեծապես ոգտակար ե զյուղացու տնտեսության պահպանման համար, պաշտել են նաև Յեղիպտոսում, ին աշխարհի այդ հացի շտեմարանում։

Դիշերը և արշալույսը, վորոնք հեթանոս աստվածներ են, քրիստոնեությունը նույնպես նկարել ե սրբապատկերների վրա (նկ. 12)։

Բացի այս, ինչպես բոլոր հին կրոնների մեջ, նույնպես և քրիստոնեական կրոնի մեջ, աղավնին սուրբ թոչուն ե համարվում, իսկ հին ասիական կրոններում կար աղավնի-դիցուհի, վորի



Նկ. 11. Քարի որբապատկեր՝ Շատր քաղաքում. պատկերացված են Քրիստոսը և չորս ավետարանիչները՝ հրեշտակի, արծվի, առյօնի և յեղան տեսքով

պատկերը քարի կամ կավի վրա համարված, հավանական է, կախված կիմներ տաճարներում (նկ. 13)։ Մինչև մեր որերը հասել են այդ պատկերները։

Հրեաները նույնպես աղավնին սուրբ թոչուն եյին համարում և աղավները զոհ եյին բերում իրենց աստված Յեհովային։ Յերբ Քրիստոս ծնվեց, Մարիամը, ինչպես զրում է Ղուկաս ավետարանիչը (գլ. 2. տ. 24), զոհել է Յեհովային յերկու տաճարակ կամ աղավնու յերկու ձագ։ Իսկ հետո, յերբ Քրիստոս մըկրտի վում եր Հովաննեսից, աստծու հոգին Քրիստոսի վրա իջակ յեր-

կնքից աղավնու կերպ։ Յեթե վերցնենք այնպիսի հին կրոններ, ինչպես ասիականներն են, վորոնք մի քանի հազար տարի, նախ քան ավետարանը, գոյություն են ունեցել, նույնիսկ նախ քան աստվածաշունչը, այն ժամանակ կտեսնենք, վոր Իզիդա, Աստարտա և Իշտար դիցուհիների կուռքերը, վոր ամուսնության, սիրուկ արգասափորության դիցուհիներ եյին, միշտ աղավնու կերպարանք եյին կրում։ Ընդհանրապես բոլոր ազգերն ել աղամիները համարել են սիրո աստվածների թռչուններ։



Նկ. 12. Յեսուսին Գիշերվա և Արևածագի միջն.  
(Հանգած և ուղղափառ հունական սրբապատկերեց)

Հիշելով բոլոր աստվածները, պիտի համոզվենք, վոր հեթանոսները բնության բոլոր ուժերը, յերկնային լուսատուները, թռչունները և ծառերը, աստված են համարել։ Աստվածներով լցըել են յերկինք և յերկիր, լեռներ ու քարանձավներ, գետեր ու ծովեր, մինչև անգամ յերկրի խորքերը, սանդարամետքը։ Արանք ամենասուածին աստվածներն եյին, վորոնց նախկին մարդիկ յերկրապատմ եյին։ Մարդիկ իրենք եյին հնարել նրանց, չիմանալով ինչպես բացատրել իրենց ամեն մի հրաշալի թվացող բան՝

լույսը, խավարը, շոգը, ցուրտը, հողմը, արել, կոկորդիլոսը, յերկիրը և այլն։ Սրանք այն հին աստվածներն են, վորոնց դեմ հետո դուրս յեկավ Մովսեսն իր տասնաբանյա պատվիրաններով՝ նոր աստծու, Յեհովայի անունից, աւելով՝ «Մի յեղիցին քեզ այլ աստվածք, բաց հինեն» (քեզ ուրիշ աստվածներ չլինեն, բացի ինձնից)։ Յեհովայից բացի ուրիշ աստված չպաշտել, թե կուզ նրանք ապրեյին յերկնքում, յերկրի վրա, ծովերում և յերկրի տակ։

Մովսեսն ինքն ել հավատում եր, վոր կա և արեի աստված և լուսնի դիցուհի, վոր կա Բահաղը (ցուլ), ոձ-դիցուհի և այլ աստվածներ, բայց նրանց համարում եր իսրայելացիներին թշնամի, վորով հետև այդ կուռքերին յերկրապատմ եյին իսրայելացիների թշնամիները, իսկ Յեհովան չեր սիրում վոտիմներ, զայրացկոտ աստված եր, ուրիշ աստվածների կուռքերը փշրում եր։ Հրեաներին



Նկ. 13. Աղամի աստվածը

յերբեմն իրավունք եր տրվում կուռքեր շինել հեթանոսների, բայց վոչ իրենց համար, թույլ եր տրվում միայն պղնձե ոձի և քերովբեների կուռքեր շինել ուխտի տապանակի անկյուններում, վորոնց յերկրապեր թույլ տվեց ինքը Մովսեսը։

Այսպես, ամենահին ժամանակներում, յերբ մարդիկ բոլորովին վայրենի եյին, ամեն բանից վախենում եյին և կախում ունելին բնության ուժերից, նրանց համար ամեն բանի մեջ կային աստվածներ կամ դեեր, աղոթում եյին ամեն մի գագանի, ծառին, կրակին, արեին, ջրին, հողմին և այլն։ Բայց քանի մարդիկ

զարգանում ելին, սովորում ապրել, աշխատել և իրենց կյանքը կարգավորել, նրանք դեն ելին ձգում անմիտ առասպելները, հրաժարվում ելին իրենց վայրենի աստվածներից և հնարում նորերը, ավելի մարդանմանները:

Թե ի՞նչպես կատարվեց անցումը՝ գաղան-աստվածներից գեպի մարդանման աստվածները, — հիմա կպատմենք:

## ԻՆՉՊԵՍ ՀԱՅՏՆՎԵՑԻՆ ՄԱՐԴԱՆՄԱՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ

Մենք արդեն ասացինք, թե ինչպես նախնական մարդիկ հնարել ելին հոգին, դա շփոթելով մարդու և կենդանիների շնչառության հետ: Ձե՛ վոր մենք ել շնչում ենք, ինչպես մյուս կենդանիները: Թոքերով: Ամեն մարդ գիտե, թե թոքը ինչ ե: Յեթե մեկը չի տեսել մարդու թոքեր, տեսած կլինի անշոշտ կովի, վոչխարի և ուրիշ կենդանիների ու թոշունների թոքեր: Թոքը սպունդի պես և և կարող ե նեղանալ ու լայնանալ: Յերբ ոդը ներս ենք քաշում, նա լայնանում ե, յերբ արտաշնչում ենք՝ սեղմվում: Թոքը գործում ե, ինչպես դարբնոցի փուքսը:

Մեռած մարդուն, իհարկե, ոդ հարկավոր չե, ուստի և թոքերն ել չեն աշխատում: Ամբողջ մեքենան խանդարվում ե, մարդը դիմակ ե դարձել, մարդն ել չկա: Հին մարդիկ չելին իմանում, վոր մարդը ոդ ե շնչում, վոր դրա համար կա թոք, այլ մտածում ելին, թե մարդու մեջ ապրում ե վոգի՝ ինքն իր համար. ահա նա փչում ե մարդու ներսից, ինչպես հողմը, բերնից ու ոռունգներից: Կարծում ելին, վոր այդ վոգին միակը չե, այլ շատ են, ու բնակվում են զանազան մարմինների մեջ — թե մարդկային, թե շան, թե խողի, թե ոճի և այլն:

Յերբ մարդը, ոճը կամ շունը մեռնում ելին վերքից, հիվանդությունից կամ ծերությունից, հոգին ել չեր կամենում ապրել փշացած մարմնի մեջ և հեռանում եր: Մեռածների այդպիսի վոգիները կամ մնում ելին անմարմին կամ տեղափոխվում ելին նորածին և բարի ու ոգտակար կենդանիների մեջ: Իսկ յեթե վոգիները չար ելին, հեռանալով թշնամու մարմնից կամ չար ու վնասակար կենդանիներից, նրանք առաջվա պես ելի վնասումելին մարդուն:

Յերբ հին մարդիկ սկսեցին ապրել ընտանիքով, այն ժամանակ այդ ընտանիքները սկսեցին կառավարել տոհմի ծերերը — պապը կամ հայրը, ընտանիքի գլուխը: Ընտանիքի գլուխը շատ քան ե տեսել իր կյանքում, բոլորից փորձառու յե, գիտե թե ինչ պետք ե անել նեղ բոպելին, գիտե խորհուրդներ տալ: Դրա համար ել, յերբ նա մեռնում եր, ընտանիքը հավատում եր, վոր նրա վոգին, կամ հոգին, կմնա ընտանիքի մեջ և սրան կպահպանեթշնամիներից: Յերբ այդպես ե, ուրեմն մեռնողի հոգին պետք ե հարգվի, ինչպես հարգում ելին այն գլխավորին իր կենդանության ժամանակակի. պետք ե հոգալ նրա մասին, տանել նրա գերեզմանի վրա կամ նրա սիրած տեղը լավ-լավ ուտելիքներ, խմիչքներ: Այս սովորությունը՝ կերակրել մեռածների հոգիները՝ պահնվել ե և պրովուլավ կրոնի մեջ: Ծնողական շաբաթ որը (մեռելոցին), զատկից հետո, հավատայցալները գերեզմանի վրա զնում են զատկական ձկեր, վոր հանգուցյալների հոգիները նույնպես թաթախվեն, ինչպես թաթախվում են կենդանի մարդիկ:

Նույնը անում են հայերը. մանավանդ զատկին՝ տանում են «մեռելի բաժինը», սկսած ներկած ձկից, թխվածքից (գաթա, հալվա և այլն) մինչև բրյան (թոնդիրը կախած ամբողջ վոչխար, մանավանդ ուլ), գինի, արաղ: Այս պատրաստությունը հատկապես շքեղ ե լինում «թազա մեռելի» «բաժինը» զատկին, աստվածածնին, մանավանդ մեռելի առաջի ս. խաչին:

Շատ հին ժամանակներում, յերբ վայրենի մարդկանց ընտանիքները բազմացան և, միանանալով, ցեղեր կազմեցին, այն ժամանակ ըրոլը ընտանիքների ծերերը կազմեցին մեծերի խորհուրդ և սկսեցին կառավարել ամբողջ ցեղը. իսկ նրանցից ամենափորձառուն դարձավ ցեղի առաջնորդը: Հասկանալի յե, վոր այդ առաջնորդը ավելի մեծ հարգանք եր վայելում, քան ընտանիքների առանձին գլխավորները, և յերբ նա մեռնում եր, նրա վոգին պաշտում ելին, ինչպես կենդանի առաջնորդի: Նրա գերեզմանի վրա հոգեհաց ելին տալիս, մարտական պարեր սարքում, իսկ հետո ծանր բռպեներին նրան զիմում աղոթքով և խորհուրդ ելին խնդրում: Իսկ յեթե ցեղի մեծերից մեկը յերազում տեսներ մեռած առաջնորդին, վայրենիները չելին մտածում, վոր

այն սոսկ յերազ եր (մենք հաճախ տեսնում ենք յերազում մարդիկ, վորոնց ճանաչում ենք, կամ վորոնց յիշում), այլ կարծում եյին, վոր իրենց այցելել ե մեռածի վողին: Այն, ինչ վոր յերազում տեսնում եյին, նրանք այդ համարում եյին գուշակություն:

Այսպես սկսեցին վայրենի ժողովուրդների մեջ հայտնիել աստվածներ՝ զորավոր և հարդկած մարդկանց հողիներից: Այս շատ նման ե այն բանին, ինչպես քրիստոնյաները, իրենց կարծիքով, մաքրակենցաղ մարդկանց հետագայում դարձնում եյին աստվածներ, անվանելով սուրբ, յերանելի, արդար, մարզարե:

Յեկեղեցին նրանց դասում եր սրբոց կարգը և, վորպեսզի վողին մահից հետո յել ոգներ՝ ի պատիվ նրանց աղոթքներ եյին հորինում, փառաբանում եյին սրբերին շարականներով, յեկեղեցական՝ արարողություններ կատարում, տոներ նշանակում, բուրգառով խունկ ու ձեթ (իբր զոհ) մատուցանում և պատկերի առաջ մեղրամում վառում:

Հին դարերում վայրենի ժողովուրդները ամեն տարի իրենց հերոս-աստվածներին զոհ եյին մատուցանում՝ անուշահոտ ձյութեր (խեժ) փառելով, զոհում եյին կենդանիներ, իրենց թշնամիներից գերի վերցրած մարդիկ:

Քանի վոր մարդը զարգանում եր, — կատարելագործվում եր և նրա աստվածը: Մարդկանց մեջ հայտնիեցին կրակ, նետ. մարդ-աստվածն ել յերևաց կրակով, վոր յերկնքից եր ուղարկվում, և հրեղեն նետերով, վոր բարկության և ամպրոպի ժամին իբր շանթ նետում եր դեերի և գազան-աստվածների գլխին:

Բայց հին մարդիկ, աստծուն պատկերացնելով իրենց պատկերով և նմանությամբ, ելի հավատում եյին գազան-աստվածներին, չար վողիներին, դեերին: Մարդ-աստվածները և աստվածգազանները նրանց մտքում շփոթվել եյին, ուստի հաճախ աստվածները ներկայանում եյին կես մարդ, կես գազան: Այսպես եյին թևավոր առյօւծները՝ մարդկային դեմքով, սերովբեները և քերովբեները՝ արծվաթե պատանիների կերպարանքով, մարդկային աչքը՝ յեռանկյունու մեջ և արև-աստծու ճաճանչներով, սուրբ մարդիկ՝ լուսապատճերով, դեերը՝ մարդակերպ, յեղջուրավոր և պոչավոր, արծվի կամ չղջիկի թևերով:

Մենք տեսնում ենք, թե ինչպես ե ստացվել մարդ-աստվածների գազան-աստվածների այն խառնուրդը, վորից շատ բան ե պահվել այսորվա կրոնների մեջ: Որինակ, բոլոր քրիստոնյաներն ել հավատում են յեղջուրավոր և պոչավոր դեերին, հավատում են և կերպարանափոխության, այն ե՝ դեեր, վորոնք մեկ շուն են դառնում, մեկ՝ գայլ, մեկ՝ խոզ, մեկ՝ սոխակ, մեկ՝ ազուավ, և այլն. յերբեմն ել ընդունում են տղամարդու կամ գեղեցիկ անառակ կնոջ պատկեր:

Անեղ դատաստանի նկարներում սովորաբար դուրս են բերում ամեն տեսակ դեեր, սկսած ոձից մինչև առյուծը: Իսկ դրախտում՝ հրեշտակներ, հրեշտակապետներ արծվի թևերով, վեցթևյան սերովբեքը և աղավնակերպ սուրբ հոգին:

Լուսավոր աստվածները արեկի ճառագայթներով շրջապատված են, շուրջը փայլատակում են շանթեր: Դեերն ու սատանաները խավարի մեջ են և նրանց՝ մոտ վառվում ե ծծմբային գարշանոտ կրակը, վոր մարդիկ տեսել են լեռների ճեղքվածքներում և քարանձավներում, վոր առաջացել են յերկրաշարժներից, հրաբուխների ժայթքումից հետո:

Այսպես ե վայրենի մարդու յերեակայությունը հնումը հնարել հեքյաթներ, ուր գործում են բարի ու չար վողիներ, ուր գազաններն ու թռչունները խոսում են մարդկային բարբառով: Մեզ համար այժմ սրանք հեքյաթներ, առասպելներ են, իսկ վայրենու համար՝ ծշմարտություն, վորովհետեւ վայրենին հավատացել ե և այսոր ել հավատում ե, վոր հոգին, զուրս գալով կենդանի եյակից, կարող ե բնակել ամեն մի գազանի մեջ և մարդկանց յերեալ: Մեզ համար ծիծաղելի յե, յերբ մտածում ենք, վոր մեռնողները և նրանց հոգիները ասես միայն մի հոգս ունեն, զանազան թռչունների ու կենդանիների դիմակներով զուգվել: Բայց հնում, և դեռ հիմա յել մարդիկ տեղ-տեղ խավարամտությամբ կարծել են ու կարծում են, վոր կերպարանափոխությունը այժմ ել վողիների գլխավոր հոգսն ե:

Մարդիկ վորքան ել խելոքացել, բարձրացել են մտքով, բայց և այսպես վայրենի հեքյաթները դարձյալ չեն անհետանում: Այժմ, յերբ մարդիկ ամբողջ աշխարհը վոտնատակ են տվել,

պրապտել են բոլոր լեռները, շողենավերով չափչիել են ծովերն ու ովկիանոսները, յերկը շուրջը թռել են սամառնակներով, վոր ավելի արագ ե թռչում քան արագասլաց թռչունը և վորով կարելի յե ամենաբարձր ամպերից վեր բարձրանալ, — մարդկանց համար չի մնացել վոչինչ անհայտ:

Վայրենի ժողովուրդների հնարած զանազան ստերը Արաբիայում ապրող շնագլուխ մարդկանց, պոչեղ մարդկանց, անգլուխ մարդկանց, ծովինարների, ամպերում կամ բարձր սարերի կատարին ապրող աստվածների մասին յեղած հեքյաթները գիտության առաջ, ինչպես ծուխ, ցրվել են:

Այժմ գիտնականները այնպիսի համբավաբերներ են հնարել ինչպես հեռախոսը և ռադիոհեռագիրը, վորոնք հաղորդում են մարդկանց կամքն ու միտքը միլիոն անգամ արագ, քան մտացածին աստվածների համբավաբերները՝ արծվաթե հրեշտակները։ Այժմ գիտնական բժիշկները ջահելացնում են ծերունիներին ու պառավերին, վորոնք դառնում են յերիտասարդ, առողջ, կնճիռները անհետանում, իսկ սպիտակ մազերը սեանում։ Մարդիկ փորել, մտել են յերկը խորքը, այնտեղից հանել քարածուխ, աղ, յերկաթ, պղինձ, կլայեկ, թանգագին քարեր, բայց չեն պատահել վոչ դժոխքի, վոչ սատանաների։ Մարդիկ կենդանացնում են անապատները՝ առավել քան Մովսեսները, գետնի տակից ջուր բղիկնելով, առանձին մեքենաներով ծակելով գետինը։ Այսպես, ֆրանսիացիք Աֆրիկայում անապատի այն մասը, ուր ըստ աստվածաշնչի թափառել են հրեաները, դարձրել են ծաղկապսակ պարտեզներ, գյուղեր ու քաղաքներ ձգել, յերկաթուղիներ անցկացրել, ելեքտրական լույս բաց թողել և ջրմուղներ սարքել։ Անգլիացիք և ամերիկացիք թեփրոպայի և Աֆրիկայի միջև և Ամերիկայի մեջ տեղում, Մեքսիկայում, ճեղել են գետինը, պարանոցները, բաց են արել ջրանցքներ և միացրել ովկիանոսները։

Մարդիկ կարող են կենդանու ու թռչնի սիրածդ տեսակը առաջացնել. ձիաբուծարանում առաջացնում են լավագույն տեսակի նժույգներ, կենդանական բուծարաններում նորանոր շների, ճագարների, հավերի տեսակներ են հասցնում. վայրի

խնձորենին, տանձենին, բալենին, յելակը և մյուս բույսերը, խոտերն ու արմտիք վեր են ածում պարտեզի և բանջարանոցի ընտիր բույսերի։ Մի խոսքով, գիտության ոգնությամբ մարդիկ այնպիսի հրաշքներ են գործում, վոր վոչ սատվածներն են յերազել, վոչ սատանաները յերևակայել, վոչ ել նրանք, վորոնք դրանց մասին հեքյաթներ են հորինել։ Առասպելական գավազանի փոխարեն, մոնչում են թնդանոթները, վոր մի քանի բովելում սրբում են ամբողջ քաղաքներ. կան տանկեր ու գնդակացիրներ, ինքնասլաց գորգի տեղ՝ ահազին և արագասլաց սավառնակներ։

Բայց տատիկ ու պապիկների հեքյաթները դեռ ապրում են խուլ անկյուններում և ճարում հավատացյալներ, վորովհետեւ գյուղերում դեռ ժողովուրդը շատ խավար ե, դեռ վոչինչ չգիտեն։ Շատ ժամանակ չե, յերբ ժողովուրդը բոց ու դղրդյունով ոլացող յերկաթուղին համարում եր վիշապ-ոձ, այսինքն՝ դև։ Աֆրիկայի և այլ յերկների վայրենիները սկզբում հարձակում եյին յերկաթուղու վրա, աղոթք կարդում և նետեր արձակում, վոր սատանային քշեն. նրանց կախարդներն ու քրմերը, յերբեմն ըերելով իրենց աստվածներին, կտրում են այդ դևի (գնացքի) ճանապարհը։

Ինչպես ասացինք, աստվածների և սատանաների հավատը դեռ պահպանվում ե։ Մանավանդ այդ յերեսում ե զանազան ծիսակատարությանց, խորհուրդների, պաշտամանց, աղոթքների և վոգեկոչությանց մեջ։

Իսկ թե այդ ծեսերը իսկապես ինչ են ներկայացնում, այդ մասին մենք հիմա կպատմենք այնպես, ինչպես վոր մեզ պարզաբանում ե գիտությունը, վոր ինքը հրաշքներ ե գործում ավելի լավ և ավելի շատ, քան հնարովի աստվածներն ու դերը։

## ԶԱՆԱԶԱՆ ՀԱՎԱՏՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ

Անցնելով զանազան կրոնական խորհուրդների, ծեսերի և սովորությունների պարզաբանության, նախ ծանոթանանք, թե վայրենիները և կիսավայրենիները ինչպես են պատկերացնում յերկիրը, յերկինքը, ծովերը, գետերը, լեռները, արեւ լուսինն ու աստղերը։

Հին մարդիկ կարծում եյին, վոր յերկիրը բլիթի նման մի բան ե, վոր լողում ե ջրի յերեսին կետ ձկների կամ հըեշ կրյաների ուսերին, կարծում եյին թե յերկրի վրա կա մի ահազին ու բարձր սար, վոր պահում ե լազուր, բյուրեղյա յերկինքը։ Այդ սարի վրա ապրում են աստվածները և այդ սարից նրանք բաց են թողնում ամպերն ու ամպրոպները։ Հենց այդ սարումն ել կան առանձին այրեր, ուր նստած են շղթայված հողմի դեերը։ Յերբ հարկ ե լինում, աստվածները բաց են թողնում հողմը, ինչպես շունը շղթայից։ Նա յել սանում ե յերկրի յերեսով։ Բոլոր մեծ գետերը, վորոնց ակունքերը անհայտ եյին, հների կարծիքով, հոսում եյին յերկնքից։ Այսպես եյին կարծում յեգիպտացիք իրենց նեղոսի, իսկ հնդկացիք՝ երենց Գանգեսի մասին։

Հնարելով ապակե յերկինք, հները յենթադրում եյին, վոր այն հինգ հարկանի յե, վորոնցից մինը հատկացրել եյին արևին, յերկրորդը՝ լուսնին, իսկ մնացածները՝ աստղերին։ Բացի այս, այդ յերկինքը մաղանման եր, վորի միջով աստվածները ջուր եյին թափում, դա անձրևն եր։ Աստվածները այդ յերկինքը պատեցնում եյին յերկրի շուրջը յերկնային լուսատուներով միասին։ Մի ուրիշ հին ժողովուրդ (ինչպես, որինակ, հույները) կարծում եր, վոր յերկինքը հենված ե մի սարի և նրան իր ուսերի վրա պահում ե Ատլանտ անունով մի հսկա։ Հնդկացիք ասում եյին, վոր յերկիրը պահում են մեծ-մեծ փղեր, իսկ փղերը կանգնած են մեծամեծ կրյաների վրա, իսկ կրյաները լողում են ջրում։

Ասորեստանցիք կարծում եյին, վոր արևը ապրում ե մի քարանձավում, լերան մեջ, վորը պահում եր յերկինքը։ Գիշերը թագ ե կենում լերան յետեր, իսկ ցերեկը դուրս է գալիս լերան յետերից՝ հրեղեն ձիեր լծած մի կառօպվ։ Իսկ աշնանը, խավարի և ցրտի աստծու ազգեցրությամբ, արել հիվանդանում ե, ձմեռը մինչեւ անգամ մեռնում ե, և միայն դատարկ կառքն ե լույս տալիս։ Դեկտեմբերի 25-ին արևի մեռած աստվածը հարություն ե առնում և կրկին աճում, ուժեղանում, իսկ ամառը նա, ուժի ու լույսի ծաղկման շրջանում, սպանում ե խավարի ու ցրտի աստծուն։ Զմեռվագեմ հարություն ե առնում խավարի և ցրտի աստվածը ու դարձյալ սկսում ե փշացնել արևի աստծուն։ ու այսպես անվերջ:

Հին մարդիկ նույնպես հավատում եյին, վոր հիվանդությունները նրանից են առաջ գալիս, վոր դեռ մտնում ե մարդու մարմնի մեջ, և վոր ամեն բան թե յերկրի վրա, թե յերկրի տակ և թե յերկնքում, լցված ե աստվածներով, դեերով, վոգիներով և սատանաներով։

Այժմ մեղ հասկանալի յե դառնում, թե ինչու հները և վայրենիները ամեն բանից վախենում եյին, սարսափում, ինչպես յերեխաները մութ սենյակից։ Ինչու աշխատում եյին և աշխատում են շնորհակալություն հայտնել, գութը շարժել և շահել իրենց աստվածներին, յերբեմն ել խարել։ Բարի աստծուն շնորհակալ լինել, վողոքել չար վոգիներին, աստվածներին ու գեերին, վոր նրանք չվսասեն մարդուն, — ահա այս նպատակն ունեն բոլոր կրոնական խորհուրդները, ծեսերը և սովորությունները։

## ՀԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ, ԹԱՂՈՒՄ ՅԵՎ ԶՈՒԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԴԺՈՒՔ ՅԵՎ ԴՐԱԽՏ

Յեթե հիշենք, թե մարդիկ ինչպես են ստեղծել իրենց մարդկային աստվածներին, վորոնք նման են իրենց, մեռած ազգականներին, առաջնորդներին ու թշնամիներին, այն ժամանակ մեղ հասկանալի կլինի մեռելոց հիշատակի ծեսը։ Հին ժողովուրդները, հավատալով հոգու անմահության, հավատացել են, վոր հոգիները մահվանից հետո, յեթե չեն բնակվում ուրիշ մարդու կամ թունի կամ գաղանի մեջ, թափառում են աներեւութաբար յերկրի վրա և կարող են վնասել կամ ոգուտ տալ։ Այս հոգին ուստում ե, խմում, ինչպես կենդանի մարդը, և ինչպես կենդանի մարդ, կարող ե սիրել և տաել։ Նույնակես և, շատ կարելի յե, զենքի կարիք կունենա իր թշնամիների հետ պատերազմելու համար։

Այս պատճառով ել բոլոր հին ժողովուրդները, ինչպես նաև այսորվա քրիստոնյաները, հոգ են տարել և տանում են մեռեւների համար, իհարկե, յուրաքանչյուրը իր ձևով։ Հները թաղման ժամանակ համարված են ու դառնում եյին զենք, կերպուր, իսմիջք,

սպանում ելին նրա կնոջը և ձին, վոր հոգին լինի կուշա, զին-ված, կարողանա ձի նստել և կնոջ հողու հետ քնել: Հետո, յերբ մարդիկ ավելի խելքի յեկան, դադարեցին այրիներին սպանելուց, բայց ստիպում ելին ամուսնու գերեզմանի վրա իրեն վերքեր հասցնել՝ դեմքը այլանդակել, մազերը փետել, գլխին մոխիր ցանել ամուսնու խարույկից: Այրին ամբողջ կյանքում պետք է չամուսնար: Ավելի ուշ, յերբ մարդիկ ավելի խելոքացան, այրիներին իրավունք ելին տալիս՝ վորոշ ժամանակից հետո կրկին ամուսնանալ: Մեր ժամանակներում վայրենի սովորութան մնացորդը արտահայտվում է սպով, վոր յերեմն ամբողջ տարի յե քաշում: Վորոշալ ժամանակից առաջ մարդու գնալը համարվում է անվայել: Իսկ հայոց մեջ քահանայի այրին իրավունք չուներ ամուսնանալ կրկին:

Թաղման ժամանակ հնումը կազմում ելին մեռելահաց (քելեխ), վորին հանգուցյալի հոգին անսեսանելի մասնակցում եր կենդանի մնացածների հետ՝ ուտելով, խմելով, ուրախանալով: Այս սովորությունը պահված է քրիստոնյաների մեջ, վոր ժառանգաբար անցել է հեթանոսներից: Մեզանում թաղման ժամանակ հոգեհաց են պատրաստում, կամ գերեզմանի վրա տանում, կամ տանը սեղան պատրաստում: Կան տեղեր, ուր գերեզմանոցում հատուկ շենք է պատրաստված և այնտեղ «հոգու հաց» են տալիս աղքատներին առանձին, իսկ հանգուցյալի աղքականներին ու հարգողներին առանձին՝ հոգեռականներին գլուխ ունենալով: Վորքան հարուստ է մարդ, այնքան ավելի առատ է և հոգու հացը (քելեխը):

Զանագան ազգեր զանազան տեսակ են մեռելոց հիշատակ կատարում և մեռեները թաղում: Մի քանիսը հավատում են հոգու անմահության, բայց կարծում են, թե հոգին այնպես ե կապված ընակարանի հետ, վոր կարող է ընդմիշտ մնալ այնտեղ (տանը). դրա համար ել, հենց վոր մարդ է մեռնում, շտապով բաց են անում դուներն ու պատուհանները, վոր հոգին կարողանա հեշտությամբ դուրս թոչել տանից: Բայց հենց վոր դուրս են բերում դագաղը տանից, դուռն ու պատուհանները պինդ փակում են: Այսպես են անում գերմանացիք զանազան

վայրերում: Աֆրիկայում ապրող վայրենիները հանգուցյալի դմիսին այլ խաղ են խաղում: Նրանք հավատում են, վոր հանգուցյալի հոգին բնակվում է այն գաղանների մեջ, վորոնք լավում են դիակը: Ուստի նրանք հանգուցյալին նետում են գաղաններին իրեւ կերակուր, բայց միևնույն ժամանակ մտածում են, վոր հոգին կարող է գլխի ընկնել և չթոչել դիակի յետեկից: Կնշանակե, նրան պետք է շակլեցնել: Վայրենիները արագ դուրս են բերում մեռելին, մի քանի անգամ արագ շրջեցնում են խրճիթի շուրջը, վոր հոգին նրա հետ պտույտ գա, ապա արագ տանում են անտառի խորքը, զին նետում են և իրենք զանազան ճանապարհներով վաղեվազ տուն վերադառնում: Հոգին, ճանապարհը կորցնելով, վերադառնում է դիակի մոտ և կերակրի հետ մտնում է գաղանների կամ թռչունների մարմնի մեջ:

Մի քանի վայրենի ժողովուրդ իրենք են ուտում իրենց ազգական հանգուցյալներին և միաժամանակ յերկու նպատակի յեն հասնում. ինչպես բացատրում են նրանց քրմերը՝ նախ հանգուցյալի մարմինը, յեփած ուտելով, կամ խորովելով և ուտելով, նրանք արագ ազատում են հոգին մարմնից, իսկ յերկրորդ՝ նրա հոգին, մասսամաս իրենց մարմնի մեջ մտնելով, դորացնում ե իրենց հոգին:

Պարսիկները մեռնողի մոտ պահում ելին մի շուն, իսկ դիակը տալիս ելին ուտելու սրբազն շներին: Այս արարողությամբ՝ պարսկի հոգին տեղափոխվում եր շան մարմնի մեջ:

Այսպես ուրեմն՝ ամեն մի թաղման արարողություն՝ քելեխ, թաղման ձեեր, զոհաբերություններ, հնարված են վոգիներին, հոգուն, աստվածներին և սատանաներին հիմարաբար հավատալուց: Բայց քանի մարդիկ դադարել են վայրենությունից և վորսորդությունից անցել են անասնապահության ու յերկրագործության, նրանց արարողություններն ու զոհաբերություններն ել մեղմացել են:

Հացն ու զինին յերեան գալով, ծեսերի ժամանակ ավելի ու ավելի փոխարինել են մարդկային և կենդանական մարմինն ու արյունը: Սրան մենք ելի կվերադառնանք, իսկ այժմ խոսենք դժոխքի և դրախտի մասին:


Զարերին պատժելու, իսկ բարիներին վարձատրելու գաղափարը շատ հին եւ Յեգիպտացիք և ասորեստանցիք, վորոնք վեց հազար տարի առաջ են ապրել և յերկրպագել արեին, աստղերին, մարդ-աստծուն, գաղան-աստծուն, — արդեն հավատում եյին դժոխքի և զրախտի գոյությանը։ Յերկու ժողովաւրդներն ել ունեյին թագավորներ, զորք, տաճարներ, քրմեր, ստրուկներ, առևտրականներ, յերկրագործներ և արհեստավորներ։ Նրանք յերկուսով ել ունեցել են ուղմական և առևտրական նախատրմիդ՝ առագաստավոր և թիավոր։ Ունեցել են որենքներ, դատավորներ ու պաշտոնյաներ, վորոնք դատել են հանցագործությունները և չարագործներին պատժել։

Այս ժողովուրդները հավատացել են հոգու անմահության, ուստի և, ինչպես միշտ սովորական եւ, հանդերձյալ կյանքը յերևակայում եյին իրենց յերկրավորի պես։ Դեռ այս քիչ եւ, նրանք հավատում եյին մեռելների հարության և հանգուցյալների դիակները այսպես եյին պատրաստում։ Հանում եյին փորոտին, լցնում զմուռով և այլ գեղերով, վոր չփաեն, ու չորացնում եյին։ Այսպիսի չորացրած դիակները նրանք զետեղում եյին չոր, քարե դագաղներում և այնտեղ զնում եյին ուտելիք և ամեն տեսակ զենքեր ու գործիքներ։ Պատերի վրա նկարում եյին հանգուցյալի կյանքից առած զեպքերը, ընտանիքի կենդանագիրները (պատկերները), ձեռքը տալիս եյին թողության աղոթք, վորով մեռելները պիտի ներկայանային Ողիբիս աստծուն և աղերսեյին նրան հարության և հավիտենական փրկության համար։

Յեգիպտացիք կարծում եյին, վոր յեթե իրենք ունին որենք, դատաստան և դատավորներ, — այդ ամենը կունենան և աստվածները։ Հետաքրքիր և նիշել, վոր հին ժողովուրդների մեջ շատ եր տարածված խաչի նշանը, և այս այն ժամանակ, յերբ քրիստոնեության մասին խոսք անգամ չեր կարող լինել (ավետարանը դրելուց հազարավոր տարիներ առաջ)։ Այսպես, արեի աստծու պատկերը սկզբում անվի ձև ուներ, կենտրոնում չորս ճաղերով։ Հետո յեգիպտացիք սկսեցին պատկերացնել միայն ճաղերը, վորից և ստացվեց խաչը։

Արեի բոլոր աստվածները պատկերանում եյին կամ գրւխին բոլորակ պսակով կամ խաչը ձեռին։ Այդ արել ճաղերով խաչաձև հաճախ նկարում են նաև քրիստոնեական պատկերում (նկ. 11. եջ 27, ուր պատկերացրած է Քրիստոսի լուսապատկը)։

14-րդ նկարը հանած է յեգիպտական պատկերից, վոր ներկայացնում է ահեղ դատաստանը, ցույց է տալիս, թե ինչպես յերկրավոր դատաստանը մարդիկ յերկինք են տեղափոխել։ Այս ահեղ նկարված ե, թե ինչպես հոգին յերկար թափառումներից ու տառապանքներից հետո կանգնում է մեռելների բարձրագույն



Նկ. 14. Յեգիպտական ահեղ դատաստանը

դատավորի, Ողիբիս աստծու և հոգիներ կլանող գիցուհու (աստվածուհի) առաջ, վորը զրկում է անմահությունից, յեթե նրանք մեղավոր դուրս գան։

Նկարի վերևում, աջ կողմից, յերկու հոգիներ, կանգնած քառասուն յերկու դատավորների առաջ, արդարանում են իրենց մեղքերից։ Դատավորական կազմի մեջ կան զանազան բարի աստվածներ, վորոնց գլխի վրա, ի նշան նրանց սրբության, կան հրեղեն լեզուներ։ Հոգիները, բարձրացնելով աղաչավոր ձեռները, կարգում են թողության աղոթքը, վոր դրել եյին նրանց ձեռքը, և նիշում են իրենց բոլոր բարի գործերը։

Ներքեռում հոգին կանգնած է կշեռքի առաջ. նա արդեն սպացուցել է, վոր, նախ՝ նրա ազգականները կամ վորդիները իր մահվանից հետո նրա համար աստվածներին զոհ են մատուցել, իսկ քահանաները աղօթել են նրա համար. յերկրորդ՝ նա, այսինքն հոգին, դեռ կենդանության ժամանակ յերկրի վրա տաճարներին և քահանաների ոգտին տվել է իր կայքի վորոշված մասը. յերրորդ՝ նա իրեն պահել է այնպես, ինչպես վոր սովորեցրել են քահանաները և արքայական որենքները: Քառասուն յերկու դատավորները, ի նշան նրա արդարության, տվել են նրան նշանիկ, բայց այդ քիչ ե. պետք ե դեռ այդ հրեղեն նշանը կշռել, դա գնելով կշեռքի մի թաթը, իսկ մեղքերը՝ մյուս:



Նկ. 15. Յեղիպտական դրույքի ծառայողներից մեկը


Կշեռքի մոտ կանգնած է Անուբիս աստվածը՝ շան գլխով, և Գտուս աստվածը՝ բազեյի գլխով, նրանք կշռում են, իսկ յերրորդը՝ արեփ աստվածը՝ խաչով գրում ե, ստուգելով բարի և չար գործերը, և զեկուցանում հոգու մասին մեռելների բարձրագույն աստծուն, Ողիրիսին, վոր նստել ե գահույքի վրա: Ողիրիսը վորոշում ե (վճռում ե)՝ հանցավոր ե հոգին թե մոչ, արդամը ե թե մեղավոր: Հոգու յերկու կողքերին կանգնած յերկու դիցուհիներ ի կատար են ածում նրա վճիռը: Յեթե հոգին մեղավոր ե, տեղն ու տեղը նա զրկվում է անմահությունից և ընդմիշտ մեռնում: Յեթե արդար ե, նրան տրվում է անմահություն և իրավունք ապրելու համարյան, ուր վոր կցանկանա՝ յերկրում, յերկնքում, նորից մտնել մարդու, գաղանի կամ թունի մարմնի մեջ:

15-րդ նկարում հանած է ստորագույն աստվածներից մինը, վորը կլանող-դիցուհու հետ վոչչացնում ե մեղավորների հոգիները:

Այսպիսի ահեղ դատաստանի հավատալիքներ, բացի յեղիպտացիներից, ունեցել են և պարսիկները, ինչ հնդկացիք, քաղդեացիք: Հայերը, իբր արենելքի հին ժողովուրդ, մոտ մանավանդ պարսից և քաղդեացոց՝ շատ նման սովորություններ են ունե-

ցել նրանց հետ, մասնավորապես ննջեցյալի հոգու, հանդերձյալ վիճակի և նրա այսգերեղմանյան արարողության:

Հայոց մեջ ել ննջեցյալի հոգին շարունակում եր իր կյանքը՝ մարմնից անկախ: Նրա մերձավորները նրա հետ թաղում ելին:



Նկ. 16. Քաղդեացիները այսպես ելին պատկերացնում մահն ու դժոխքը

ուտելիք, զենք, սպանում ելին նրա ձիերը, շները, ստրուկներին, հարձերին: Նույնիսկ մերձավոր ազգականները անմասն չելին մնում՝ մազերը կտրում կամ փետում ելին, յերեաներից, մարմնից, կծելով կամ զենքերով խոցոտելով՝ արյուն հանում: Իսկ վոր-

բասաց կանայք («գուսանք» կամ «յեղերամարք») յերգով պիտի հոչակեցին նրա կենդանության գործերը։ Հանդերձյալ կյանքում դատաստանն ու հատուցումը, պարսից նման, կարձ եր, հոգին մազե կամուրջով պիտի անցներ, և նրան ոգնում ելին իր բարի գործերը, վորոնք, իրը գեղեցիկ և անուշահոտ հոգիներ, դիմավորում ելին և մի ակնթարթում մազե կամքջից անց կացնում. իսկ մեղավորին դիմավորում եր գարշելի վեմքով գարշահոտ վոգին, նրա չար գործերի մարմացումը, և վլորում դժոխքը։

Ահեղ դատաստանի մասին տեղեկություններ տալիս են նաև մին քաղեական գրքերն ու պատկերները։ Քարի վրա փորագրված քաղեական պատկերից հանած մի նկար դնում ենք այս տեղ (նկ. 16):

Վերևում և այդ պատկերի յետելից գլուխը դուրս ե հանել մահվան աստվածը։ Մեջ տեղում՝ մեռած քաղեացին իր մահիճում։ Մեռածի գլխավերելում, ինչպես նաև վոտների մոտ — յերկու ձուկ աստվածներ են։ Քաղեացիք ավըրում ելին Պարսից ծոցի ափին, ծովեզրյա ժողովուրդ ելին, ծովային առևտրով, ձկնորսությամբ ելին զբաղվում. մի խոսքով, ծովը նրանց կերակրում եր, ծովս ել կարող եր նրանց վոչնչացնել՝ փրցրելով փոթորկի ժամանակ նրանց նավերն ու մակույշները։ Այս իսկ պատճառով քաղեացոց գլխավոր աստվածներն ել ծովային ելին և ձկան պատկերով։ Ուստի այդ աստվածներն ել վճռում ելին այն հարցը՝ թե հոգին արդար ե թե մեղավոր։ Վերևում կանգնած են բարի աստվածները, վորոնք պաշտպանում են հոգին, իսկ ներքեւում, ծովի անդնդում, մոլեգնում են դևերը և հոգին են պահանջում։ Այստեղ արդեն մեղ բոլորովին ծանոթ նկարներ են՝ թևավոր և պոչավոր դեմք, յերկովանի ոճ, իսկ ոճից ու ձիուց վերև՝ ինքը սատանան։ Նկարի վերեւում — արև աստծու պատկերը՝ հրեղեն անիվի տեսքով, ձաղերով, և դիցուհի աղավնին. այնտեղ ել դրախտը արդարների համար։

Հոգու թափառումների ու տառապանքների, ահեղ դատաստանի, դրախտի ու դժոխքի մասին յեղած ստահոդ պատմությունները հնարել են դեռ ին հեթանոսները և նրանց քրմերը,

իսկ քրիստոնեական քրմերը, կամ քահանաները, հարմարացրել են այս սարսափելի հեքյաթները քրիստոնեության, փոխ առնելով հին հեթանոսներից։ Այս հիմարությունները մարդկանց ինչին ելին պետք, վորոնք այլև վայրենիներ չելին։ Պատասխանը պարզ է։ Հեթանոս քրմերը, տեսնելով իրենց հոտի յերկյուղը մահվան ու զեերի նկատմամբ, հնարել են, վոր իբր իրենք աստվածների կամքը կատարողներ են, և աստվածները նրանց իրավունք են տվել մեղքերի համար փրկանք ստանալու ինչպես արդեն հիշատակեցինք, արդար ելին դուրս գալիս նրանք, վորոնց համար նախ՝ աղոթել են քրմերը տաճարում (իհարկե, վճարով) և վորոնք զոհ ու նվերներ են մատուցել սրբազնադորձ պաշտոնյաններին։ յերկրորդ՝ փրկվել են նրանք, վորոնք իրենց կենդանության ժամանակ արդեն զոհաբերել են տաճարին իրենց կարողության նշանավոր մասը, և վորքան շատ են զոհաբերել, այնքան ավելի յեն արժանացել պարզելի. իսկ յերկրում այս նվերներից ու կայքերից հարստանում ելին տաճարներն ու քրմերը։

Քրիստոնեական քահանաները նույնպես գլխի յեն ընկել, թե վերքան ոգտակար ե վաճառել մեղաց թողություն և ել ավելի, քան հեթանոսները, նկարել դժոխքը և դրախտը, և ել ավելի վախեցնել խավարամիտներին, նավատացյալներին։ Քրիստոնյաները բանը այնտեղ հասցրին, վոր համարյա ամեն մի՛ նույնիսկ տստծու առաջ գործած՝ ամենածանր մեղքերից ել կարելի ե փըրկանքով ազատվել՝ փթանոց մոմեր բերելով, տաճարին՝ զանգակներ, վանքին՝ կայքը նվիրաբերելով, միայն թե քահանաները և աբեղաները մեղքերը թեթևացնեն։ վորովհետև «ով չի մեղանչում, նա յել չի զղջալ, իսկ ով չի զղջում, նա յել չի փրկվում»։ Կնշանակե, գործիր ամեն տեսակ մեղք, կատարէր յեղեռներ, ապա զղջա, և բոլորն ել կարբի։ Այս բանի լավ որինակ տալիս ե յերանելին Դավիթ, ինչպես նրա կյանքն ե ցույց տալիս, վոր մինչև զառամյալ հասակը ավագակապետ եր։ Կողոպատում եր, մորթում բոլորին՝ ծերերից սկսած մինչև մանուկները, հարբում, առևեանգում, հրդեհում, չարչարում, տանջում մարդկանց. իսկ ծերության ժամանակ սկսեց իր հոգու մասին մտածել։ Վանք մտավ, թանգագին նվերներ տվավ, աբեղա դարձավ,

ծում եր պահում, աղոթում, ուստի նրա բոլոր մեղքերը քավեցին և յեկեղեցին նրան սրբոց կարգը դասեց:

Ավելի պարզ վարփեց կաթոլիկ յեկեղեցին: Հռոմի պապը, սուրբ հայրը, մի ժամանակ ինդուլքտենցիաներ եր վաճառում, այսինքն վաճառում եր զանազան մեղքերի (սպանութույն, գողութույն, թալան, բոնաբարություն, սրբազնություն, ավագակություն, արբեցողություն, անառակություն, ստություն և այլն՝ պատվիրանների ամեն տեսակ խախտում) թողությունը վախերացնող թղթեր: Աբեղաները մաս ելին ածում այս թղթերը մասունքների և սուրբ հաղորդությունների հետ և վաճառում մեղավորներին մեծագին գումարներով:

Մեղավորները՝ մարդասպանները, գողերը և այլն, գնում ելին այս թղթերը և համարվում ելին արդար: Շատերն ել այլ կերպ ելին վարփում. ապագա մեղքերի թողության թուղթը գնում, իսկ հետո սպանում ելին, և ապրում հանդիստ խղճով, վոր երենց մեղքից՝ գեռ գործելուց առաջ՝ սրբվել են: Հռոմի կաթոլիկ յեկեղեցին մի ժամանակ քափության թղթերով այնպիսի հարստություն դիզեց, վոր մինչեւ անգամ պետություններին վոսկի յեր փոխառություն տալիս:

Ահա թե տիմարների և խավարամիտ մարդկանց համար հնաբաժան հեքյաթները վորքան յեկամուտ կարող են բերել խելքների և խորամանկների գրպաններին: Չե վոր այդ մեղքերի համար սուացած փողերը հոգևոր հայրերը յերկինք չելին ուղարկում, այլ այս աշխարհումն ելին վայելում: Քրիստոնյա յեկեղեցին նույնպես ունի շատ գույք, տներ ու դրամագլուխ, վոր կտակով, հոգու փրկության համար, թողել են մարդիկ և վորոնք ոգտագործվում են այստեղ, յերկրի վրա: Այդ յեկամուտներից յեկեղեցու իշխանները՝ վարդապետներ, ավագ յերեցներ, և այլն, իրենց համար են ոգտագործում և, բացի այդ, ոռնիկ են ստանում, անուշ ուստում և անուշ խմում են, իրենց քեֆին անհոգ ապրում: Հայոց յեկեղեցիներին ու վանքերին կտակած գույքերի հաշվով վոչ միայն վարդապետներն ու յեպիսկոպոսներն են ապրել ու ապրում են, այլ և ապրեցրել են ու ապրեցնում են իրենց հեռավոր ու մոտավոր ազգականներին:

## ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՅԵՎ ԴԵՎԵՐԻ ԽԱԲԵՅՈՒԹՈՒՆՆԵՐԸ ՔՐՄԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄՔ

Ամեն մի նոր կրոն ձգտում ե բարձրացնել իր աստվածաներին, իսկ հները դևեր դարձնել: Այս լինում եր այն ժամանակ, յերբ մի հավատի ժողովուրդ հաղթում եր մի ուրիշ ժողովրդի, ուրիշ հավատի: Բայց պատահում եր և այնպես, վոր զանազան ժողովուրդների աստվածներ իրար ելին խառնում և մի քանի բարի աստվածներից ստացվում եր մի շատ հզոր, ահեղ աստված, իսկ մի քանի չար աստվածներից՝ մի չարը աստված՝ ստանա:

Բայց և այնպես — չար ու բարի աստվածների անընդհատ կռի գաղափարը մնացել և հավատացող մարդկանց խավար ուղեղում, և նրանք իրենց շատ վատ ելին զգում: Մի կողմից նրանք չելին ցանկալ յերկրավոր բարիքները ձեռքից բաց թողնել, մյուս կողմից վախենում ելին դժոխքից և չելին համարձակվում խախտել աստվածային որենքները, վոր սարքել ելին քրմերը: Ճար չկար, պետք եր խաբել: Արդեն ասել ենք, վոր վորմանք ազատվում ելին փրկանքով, մի քանիսը, համաձայնության գալով քրմերի հետ, ուրիշ խաղեր ելին խաղում: Այսպես, հին Հռոմում, ըստ նախնի կրոնի, պիտի Տիբեր գեաը ձղելին յոթը զլուխ, վողորմած զարձնելին ջրի աստծուն: Սկզբում ուղղակի կտրում ելին ստրուկների զլուխը և՝ ի փառս աստծո՝ գետն ելին նետում: Հետո ափսոսացին ստրուկներին. չե վոր ստրուկներին փողով են առնում, աշխատանքի համար ել հարկավոր են. սկսեցին գետը նետել յոթ մեկոնի (խաշխաշի) զլուխներ: Քըրմերը, ընծաներ ստանալով, չելին վիճում, ասելով, թե ոռւրք գրքի մեջ ասված չել ինչ զլուխներ, այլ միայն ասված ե՝ «յոթը զլուխ»:

Ե՛լ ավելի խորամանկ են վարդում հրեաները, վորոնց որենքը արգելում ե շաբաթ որը աշխատել, ձեռքով բան տանել և քաղաքի սահմանից գուրս գալ: Սակայն Թալմուդում ուարբիները բացատրել են, վոր մի հարկի տակ ձեռքին կրել կարելի

յեւ գնալ կարելի յեւ այսքան սաժեն այն տեղից, ուր գտնվում է տան ոջախը և հացը: Յեզ ահա ավաններում հրեաները պարան են կապում տնից մինչև փուռը, կամ ուր վոր հարկավոր ե, և դուրս ե գալիս, վոր տները միացած են, կնշանակե, նրանց կտուրներն ել մի յեն, հետևաբար, կարելի յեւ գնալ փուռը և հաց կրել: Իսկ յերբ հրեան ցանկանում ե շուկայից մի բան գնել, տուն տանել, նա վարձում ե մի բեռնակիր, ու նա տանում ե, իսկ ինքը գնում ե յետեից, և որենքը չի խախտվում: Շաբաթ որը յերեխաները դպրոց են գնում, իսկ նրանց դրբերը և տետրակները ծառան տանում ե դպրոց և բերում տուն: Դուրս ե գալիս, իբր թե յերեխաները շաբաթ որը չեն պարապել:

Ավելի ձեռնուու յեր հնումն հրեաների քավության նոխազի սովորությունը: Հավաքվում եր ժողովուրդը Յեհովային աղոթելու, իսկ քահանաները և դևատացիք բոնում եյին մի նոխազ (այծ). սրան յուրաքանչյուր հավատացյալ ձեռք եր զիալցնում, աղոթք կարդալով, և այս միջոցով նրանց մեղքը անցնում եր նոխազին: Յերբ այսպես նոխազի վրա եյին բառնում բոլորի մեղքերը, նրան տանում եյին անապատ ու բաց թողնում, վոր զիշակեր զազանները հոշոտեն: Իսկ յերբ նրան պատառուում եյին զազանները, նոխազի հոգու հետ հրեաների մեղքերն ել անցնում եյին նրանց մեջ, աղոթող հրեաները սբրվում եյին իրենց մեղքերից: Հոսմի պապերի քավության թղթերի նման մի բան եր դուրս գալիս:

Ասենք խավար, հավատացող հրեաները այժմ ել այս ձևով խաբում են իրենց աստծուն՝ Յեհովային և դեմին: Իրենց տոներից մինի նախորեյի յերեկոյան ամբողջ ընտանիքն ուղևորվում ե զեպի հավաբռն, յուրաքանչյուրը վեր և առնում մի մի հավ կամ մի-մի ճուտ և, աղոթք ասելով, պատում իր զիսի վերեսում: Այսպիսով, նրանց բոլոր մեղքերը մտնում են հավերի մեջ: Հետո այդ հավերի զլուխը կտրում են, հավերի հոգին դուրս ե գալիս արյան հետ և իր հետ տանում ե բոլորի մեղքերը ուղիղ գկին, իսկ հավատացյալ հրեաների հոգին մաքրվում ե մեղքերից: Հետո այդ հավերը ջրի մեջ են դնում, վոր արյունը դուրս տա, վորովհետեւ արյան կաթիների մեջ կարող եր մնալ: հավի

հոգին, նրա հետ ել՝ խրված-մնացած վորեն մեղք: Այս արարություններից հետո հավին ուտում են:

Դժոխքը, դրախտը, ահեղ դատաստանը և թաղման ծեսերը բացատրեցինք, այժմ անցնենք կրոնի այլ հիմքերին:

## ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ (ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ) ՅԵՎ ԶՈԼԵՐԸ

ՄԵՆՔ գիտենք, թե մարդու և գաղանների նման աստվածներն ու դեերը վորտեղից են ծագել, գիտենք մեռելոց հոգիների պաշտամունքը ինչպես են առաջ յեկել, ինչպես ե ծագել ահեղ դատաստանի, դրախտի և դժոխքի միտքը: Բոլոր կրոնների, բոլոր ծեսերի հիմքը կազմում են այս բոլոր հավատալիքները: Այս ամենը աճել են հին ժողովուրդների ամենախավար սնոտիալաշտություններից: Բայց այնպիսի ծեսեր, ինչպիսիք են փրկանքով (փողով) մեղքերի թողություն տալը, տաճարներին նվերներ բերելը, — հնարել են կրթված քրմերը և քահանաները՝ ժողովրդի գրականներից իրենց ոգտին փող պոկելու համար: Մնացած ծեսերն ու խորհուրդները, վորոնց մասին պիտի խոսենք այժմ, նույնպես ստեղծել են քրմերն ու քահանաները, վորոնք իրենց ձեռքն են հավաքել հետզհետեւ ավելի մեծ իշխանություն: Հավատացյալներից ավելի կրթված ու խելոք լինելով, նրանք կաշկանդել են այդ հոտը ամեն տեսակ ծեսերով, ուխտերով, ուահերով ու տոներով այնպես, վոր հավատացյալները իսկապես «վոչխարների հեզ հոտ» են դարձել, իսկ հոգեսր հովիժները, նայած իրենց շահերին, արածացըել կամ խուզել են նրանց:

Սրբազնագործ պաշտոնյաների հաշվին գալիս եր, վոր ամենքին ել «ծառա աստծո» դարձնեն և դրանով իրենց «ծառան», ստրուկը շինեն, վորովհետեւ քրմերը ամեն բան անում են աստծու անունից: Այս նպատակով ել ծեսերի մեջ մտցրել են աստվածներին և դեերին հմայիչ խոսքեր ուղղելը — կախարդությունը, վորովհետեւ, հմայությունը, պատմություններ աստվածների և դեերի հայտնության մասին և այն ամենը, ինչ վոր հնարել են հին վայրենիների յերեխայական մտքերը: Կրո-

նական ուսմունքը դիտմամբ խճճում ու խրթնացնում եյին, վոր հավատացյալները առանց քրմերի և քահանաների ցուցմունքին ու բացատրության վոչինչ չհասկանային իրենց դավանած հավատից: Յեկ վորպեսզի հավատացյալները չհակառակեյին և ամեն ինչ առանց դատելու ընդունեյին, կրոնի պաշտոնյաները մատնացույց եյին լինում աստծու հայտնության վրա և ամեն մի անհասկանալի բանի համար ասում եյին, վոր այս կհասկանան միայն արդարները:

Սրանով ե բացատրվում, ի միջի այլոց, այն, վոր կաթոլիկական յեկեղեցին աստվածապաշտական գրքերը չի թարգմանում հավատացյալների խոսակցական լեզվով, այլ ամբողջ աստվածապաշտությունը կատարվում է լատիներեն: Հրեաները աստվածապաշտությունը կատարում են ին հրեական լեզվով, պրովուլաֆները՝ ին սլավոներենով, հայերը՝ գրաբար, թյուրքերն ու թաթարները՝ ին արաբերենով: Այս բոլոր լեզուներն ել կամ ժողովրդին բոլորովին անհասկանալի յեն կամ հասկանալի յեն հազիվ հարյուրից մեկին: Այս պայմաններում հավատացյալը ակամա պիտի դիմե քահանային, ուաբքուն կամ մոլլային և բացատրություն կամ ցուցմունք ստանա:

Աստվածապաշտությունը ինքն ել կատարվում է այնպես, վոր հավատացյալները ամեն բան չեն տեսնում: Տաճարներն ունին սեղաններ, սրբություն սրբոց, ուր կարող են մտնել միայն ձեռնադրվածները: Ինչ վերաբերում է այնպիսի խնդիրների, ինչպիսին՝ ով ե աստված և ի՞նչ ե նա, ի՞նչ տեսք ունի նա, — քրմերը և քահանաները դրան պատասխանում են՝ թեև դանագան կերպ, բայց միևնույն բանը:

Մաքրիները մինչև անգամ արգելում են աստծու անունը տալ, ուր մնաց նրա մասին դատել: Նրան կարելի յե աղոթել, փառաբանել, բայց փորձ անել, իմանալ, թե նա ինչպիսի բան է՝ այդ հանցանք եւ կմեռնես, և յեթե արդար դուրս կզաս, կտեսնես ինքու: Մովսեսը նրա մարգարեն եր, նա յել չեր տեսել աստծու յերեսը, այլ միայն զգացել եր նրա ներկայությունը և տեսել նրա նշանները: Ուստի և հրեաները իրենց աստծուն, Յեհովային, վոչ մի կերպ չեն պատկերացնում.

Մուսուլմանները և նրանց մարգարեն՝ Մահմեդը, նույնակես աստծուն չեն տեսել և նրան ամենակին չեն պատկերացնում:

Քրիստոնեական քահանաները իրենց հերթին խորհուրդ են տալիս, վորքան կարելի յե քիչ դատել աստծու մասին, և հիշեցնում են յերրորդ պատվիրանը. «Մի հիշիր քո տիրոջ, աստծու անունը, իգուր տեղը»: «Մի առնցուս զանուն աստուծու քո ի վերա սնուայց»): Քրիստոնյաները «յերեք անձինք և մի աստվածություն» վարդապետությունը փոխ են առել յեզիդացիներից, վորոնք դրան հասել եյին հինգ հազար տարի առաջ: Իսկ յերբ հավատացյալները ցանկանում են հասկանալ այդ հանելուկը, նրանց ասում են. կա հայր աստված, կա վորդի աստված և սուրբ հոգի աստված, բայց այս բոլորը մի աստված և «խորին խորհուրդ ե այս», վոր կարելի յե հասկանալ (ըմբռնել) միայն աստվածային հայտնությամբ: Այս գաղտնիքը հասկանում են միայն սուրբ ընտրյալները, իսկ մնացածները պետք ե միայն հավատան, վոր այս այսպես ե, այլ վոչ թե մտածեն (խորհեն), վորովհետեւ ըստ կաթոլիկ, հայ, պրովուլավ սուրբ հայրերի ուսուցման միտքը ամեն չարյաց մայրն ե («միտք են ծնող ամենայն չարյաց»): Այսպես բոլոր կրոններն ել բոլոր ուժով ծածկում են աստվածային գաղտնիքը հավատացյալներից և դրա վրա խորհելլ (մտածել, դատել) արգելում են: Այս նրա համար են անում, վորովհետեւ վոչ մի գաղտնիք չկա: Այս նույնն ե, ինչպես վոր մի քանի կաթոլիկ յեկեղեցիներում մեծամեծ վճարներով ցույց են տալիս մադոննայի (տիրամոր) մազերը: Դուրս ե գալիս աբեղան, և իբր թե քունել ե մատներով մազը, և ասում ե. «Ահա աստվածամոր մազը: Ով բոլոր մեղքերից ազատ ե, նա միայն կտեսնի այն»:

Հավատացյալները՝ աչքերը չուած՝ նայում են, բայց վոչինչ չեն տեսնում: Հետո լացով գետին են ընկնում և աստծու ցինդրում մեղքերին թողություն, վոր արժանանան աստվածամոր մազը տեսնելուն: Իհարկե, այդպես վոչ վոք ել յերեք չի տեսնիլ այն մազը, վորովհետեւ աբեղայի ձեռին վոչինչ չկա, — դուրս ե գալիս, վոր դատարկ ձեռքով ե, բայց սրիկայություն ե անում, շառլատանություն ե անում:

Այդպիսի խաբեյություններ շատ հաճախ գործ են դնում բոլոր կրոններին և դավանություններին պատկանող յեկեղեցիները։ Բավական ե հիշել, որինակ, հայ-լուսավորչական յեկեղեցու «մեռնորդնեքը», պղնձե կաթոսայի մեջ լցված հեղուկը (մեռնը) իր թե յեփ ե զալիս (տաքանում ե) միայն այն բոպեյին, յերբ նրա մեջ են թաթախում «Լուսավորչու աջը»։ Ճշմարտությունը սրիկայաբար թագյնում են հավատացյալներից, վորոնք չդիտեն, թե քիմիական ինչ գործողություն են։ Կրոնավորները կատարում, յերբ ցանկանում են պղնձը տաքացնել։

Գիտությունը բոլոր հեքաթներից հզոր ե և կարողացել ե մերկացնել «աստվածների խորհուրդները», վորոնք գաղտնիք չեն, այլ պարզ սնոտիապաշտություն։ Գիտնականները ուսումնասիրել են հնդիկների կրոնը, վորի հիմնադիրը համարվում է երիշնան, վիշնու աստծու վորդին, վոր յերկիր ե իջել մարդկանց փրկելու համար։ Այս երիշնան, վորի ուսմունքը ստեղծվել ե քրիստոնեության յերեալուց 3000 տարի առաջ, նույնպես խոսում եր յերրորդության մասին։ Նա պնդում եր, վոր աստվածությունը կազմված է յերեք աստվածներից՝ Բրահման՝ հայրը, Մայիս՝ մայրը, Վիշնու՝ վորդին։ Նա ասում է, վոր Բրահման հայրը՝ այդ հոգին ե։ Ինչպես ամեն մի մարդու մեջ, յուրաքանչյուր գագանի մեջ, թուչի ու ձկան մեջ, ամեն մի ծառի, քարի, արևի, կրակի, գետի, ծովի մեջ՝ հոգի կա, այնպես ել ամբողջ աշխարհում կա ընդհանուր հոգի և այս հոգին՝ աստված Բրահման ե։ Հոգին առանց մարմնի չի լինում, ուստի բոլոր մարմիններն ել յերկրի վրա մի ընդհանուր նյութից են, և աշխարհի ամբողջ նյութը, բոլոր մարմինները և նյութերը, ինչ վոր կան յերկրի վրա և յերկնքում, կազմում են մի նյութ, մի մարմին, վորի մեջ նստած ե աստվածային հոգին՝ Բրահման, իսկ տիյեղերական մարմինը՝ այդ դիցուի Մայիսն ե, մայրը՝ նա ասում ե, վոր մարմինը չի կարող ապրել առանց հոգու, հոգին ել — առանց մարմնի։ միայն այն դեպքում, յերբ մարմնի մեջ հոգի կա, կա և կյանք, այսինքն վորդին աստված — Վիշնուն։ Հոգու և մարմնի բաժանումը մահն ե։

Այստեղից կրիչնան յենթադրում եր, վոր մարդն ել յերբություն ե. Նրա մեջ Բրահմայի հոգին միանում է Մայիսի մարմնի հետ. և այս միացումից ծնում ե մարդու կյանքը։ Ուրիշ խոռոչով, աստված ել այնպես և կազմված, ինչպես մարդ։

Ահա ինչպես և սովորեցնում հնդիկների կրոնը։ Հնդիկների քրմերը այս ծածուկ են պահում իրենց ժողովրդից, բայց գիտնականները, ուսումնասիրելով գրքերը, իմացել են և ապացուցել, վոր քրիստոնեությունը իր յերրորդության վարդապետությունը ամբողջովին փոխ է առել հնդկացիներից, մտցնելով աննշան փոփոխություններ։ Հայր աստծուն քրիստոնյաները պահել են, կոչելով նրան Սաբաովթ, պահել են և վորդի աստծուն՝ անվանելով Քրիստոս, իսկ Մայիս դիցունուն Մարիամ են անվանել և յերրորդությունից հեռացել են, նրա տեղը դնելով քաղղեական դիցունուն — աղավնուն, կոչելով նրան աստվածային հոգի։

Ուսումնասիրելով բոլոր կրոնները, գիտնականները համոզվել են, վոր մյուս ծեսերն ու խորհուրդներն ել, վոր կազմում են գլխավորը ժամանակակից կրոնների (հրեական, քրիստոնեական և մահմեդական), միայն ձևափոխություններ են այն սովորությունների և արարողությանների, վոր հնարել ելին հին հեթանոսները։

Վերցնենք, որինակ, զոհաբերությունը և հաղորդությունը ամեն տեսակներով, ինչպես վոր յեղել են և այժմ ել կան։ Ամենից սարսափելին, վոր հնարել են մարդկի, այդ այն ե, վոր նրանց աստվածները սնվում են կենդանի արարածների հոգով, նույնպես և արյունով, սրտով, ուղեղով, ուր վոր այդ հոգին ապրում ե կենդանու, թուչի, մարդու կենդանության ժամանակ։ Յեթե քննենք կրոնները, կտեսնենք վոր նրանք բոլորն ել արյունով են վորդոված։

Հիմա հիշատակենք մարդկային զոհաբերության բոլոր ամենահայտնի դեպքերը, յերբ մարդկային հոգիներով հազեցնում ենին աստվածներին և մեղմում նրանց բարկությունը։ Մարդիկ միշտ հավատացել են և այժմ ել դեռ հավատում են, վոր դժբախտությունները աստվածային բարկության հետևանք են,

ուստի աշխատում են վորքան հնարավոր ե շուտով շահե  
բարկացած ասոծուն զոհով:

Այսպես, հին վյունիկեցիները, վոր պաշտում եյին Մոլոխ  
աստծուն, շինել եյին աստծու մի մեծ պղնձե արձան, վոր շի-  
կացնում եյին, և ծնողները կուռքի բերանն եյին նետում իրենց  
յերեխաներին՝ թմբկի, պարի ու յերդի տակ:

Հին հունաստանում խոլերայի և ժանտախտի ժամանակ  
Արտեմիս դիցուհու տաճարի վրա ամեն որ վիճակով մորթուն  
եյին մի քանի մարդ, վոր դիցուհու բարկությունը մեղմեն:

Հին հոռմում ամեն որ Յուլիստեր աստծուն զոհ եյին բե-  
րում մի-մի մարդ. իսկ Սպարտայում Դիանա դիցուհուն զո-  
հում եյին մանուկներ, վորոնց ճիպոտով ծեծելով, սպանում  
եյին տաճարի սեղանի վրա:

Գացիոս Մարիս, հոռմայեցի զորավարը, աստվածներից  
ոգնություն ինդրեց, վոր հաղթություն տանի, և յերբ հաղթեց  
թշնամիներին, կիմբրներին, իր դուստր Կայլպուրնիան նրանց  
զոհեց: Հին հունաց զորավար Ագամեմնոնը աստվածներին զոհ  
բերեց իր Իփիգենիա աղջիկը, վորպեսզի իրեն հաջող հողմ  
ուղարկեն և փոթորիկներից ազատեն: Նույնը անում ե և բա-  
րեպաշտ հրեա զորավար Յեփթային, վորը Յեհովայի ոգնու-  
թյամբ ջարդել եր թշնամի՝ հեթանոս ամմոնացոց և վորը զոհեց  
իր միակ աղջկան, այրելով նրան խարույկի վրա (զիրք դատ-  
ու. ԺԱ): Այդ նույն արյունարքու աստվածը, աստվածաշնչի  
վկայությամբ, պահանջեց Սբրահամից զոհաբերել, այսինքն  
մորթել ու այրել խարույկի վրա, իր միակ վորդուն. և միայն  
այն ժամանակ, յերբ Սբրահամը դանակը բարձրացրեց վոր  
մորթի, բռնեց Սբրահամի ձեռքից ու թույլ տվեց նրան վորդու-  
տեղ՝ գառը մորթել ի փառս յուր:

Հայոց մեջ մարդկային զոհեր հիշում ե Պլուտարքոս՝ «Սի-  
կովս մե քարի» առիթով, վոր մարդագոհի համար եր կանգնե-  
ցրած (մեհյանի մոտ). բռնում եյին զոհի վոտներից և, խփե-  
լով քարին, շախչախում եյին գանգը, հորդ արյունը հոսում եր  
զոհյալներից: Նույն իսկ XI դարու մի հեղինակ, Անանիա  
վարդապետը, հիշելով մարդկային զոհերի մասին՝ գրում ե. «Կա-

խարդված հեթանոսական հիմարությամբ, զզվելի ճենձերնե-  
րով լցնում եյին հարկերը (մեհյանների) և վորդոց ու աղջկե-  
րանց արյունով լվանում եյին «պղծալից հարկերի» հատակները»:

Վերջապես, մարդկային՝ ի պատիվ աստվածների՝ զոհերի  
սարսափները զանազան կրոնների ծիսակատարության համա-  
ձայն հասել ե անհավատալի չափերի: Համարյա բոլոր գերի  
թշնամիներին զոհում եյին աստծուն, ինչպես և կրոնի դեմ  
մեղանչողներին: Սուրբ սաղմոսերգու Դավթի համաձայնու-  
թյամբ Սավուղ թագավորի ամբողջ սերունդը զոհեցին աստ-  
ծուն. «Նրանց կախեցին Յեհովայի առաջ» — զրում ե աստվածա-  
շունչը:

Հին մեքսիկացիք, վորոնք ապրում եյին Ամերիկայում,  
առանձնապես արյունալի զոհեր եյին մատուցանում իրենց  
վիցլիպուցի աստծուն: Դեռ 1446 թվին Պրեսկոտա ճանապար-  
հորդը ականատես և յեղել 70 հազար գերիների զոհաբերության:  
Ամբողջ ժողովուրդը հավաքվել եր, և յերդ ու յերաժշտության  
տակ կատարվում եր մարդկային այս սպանդը: Դժբախտներին  
բերում եյին իրար յետեկց, պառկեցնում եյին սուրբ քարի  
վրա, ճղում «սուրբ» դանակով կուրծքը, դողողուն սիրտը հա-  
նում և դնում եյին աստծու սեղանին, արյունը քսում նրա  
շրթունքներին, դիակները գլորում սանդուխքներից ցած, վորտեղ  
նրանց բռնում, գլուխը կտրում ու շարում եյին տաճարի շուրջը,  
իսկ մարմինները տանում յեփում կամ խորովում եյին ժողովրդի  
խնջույքի համար, վորը սկսվում եր այդ որվա բոլոր գերիները  
սպանելուց հետո:

Ամեն տարի հին Մեքսիկայում այս ձեռվ զոհաբերում եյին  
տասնյակ հազարավոր մարդիկ: Բրագիլյայում մի ուրիշ հին  
ամերիկացի ժողովուրդ, վորպեսզի քաղցրացնե աստվածներին,  
խեղդում եր բոլոր նորածին մանուկներին, վորոնք աշխարհ  
եյին գալիս այդ աստծու տոնի որը, և լափում եր:

Բացի այս, բոլոր հավատների և ժողովուրդների մեջ յեղել  
ե սովորություն պատի մեջ կենդանի (վողջ-վողջ) շարել մի  
պատանի կամ աղջիկ, կամ յերեխա, յերբ տաճարի հիմքն եր  
ձգվում: Այս նույնպես զոհ եր այն աստծուն, վորի համար տաճարն

Եյին շինում: Բայց վորքան ել վայրենի ու խստասկրտ լինելին մարդիկ, ելի սիրում եյին իրենց ազգականներին ու զավակներին, վորովհետև մինչև անզամ գազաններն ել սիրում են իրենց ձագերին և իրենց նմաններին: Բացի այս, մարդիկ վախենում եյին և այն բանից, վոր նրանցից յուրաքանչյուրին կարող ե զոհ դառնալու վիճակն ընկնել, ուստի ժամանակի ընթացքում սկսում են հնարել ամեն տեսակի խուսափումներ, զանցառումներ, մարդկանց չեն սպանում, այլ խեղդում են կամ դրա նման բաներ անում:

Աֆրիկացի սևամորթ բուշմենները աստծուն զոհ են բերում իրենց ճկությը, կարելով այն, յերբ պատանին չափահաս եր դառնում, և արյունը քսում քարե կուռքի շրթունքին: Հին հրեանները, արաբները և այլ հին ժողովուրդներ ուրիշ բան հնարեցին. կտրում եյին ամեն նորածին տղայի սեռական անդամի ծայրից մաշկը և այդ մասը զոհում աստծուն, իսկ աղջիկների նկատմամբ այլ կերպ եյին վարվում, քրմերը իրենց մատը կամ աստծու քարե անդամը իրում եյին աղջկա սեռական անդամի մեջ, զրկելով նրանց կուսությունից, ի պատիվ աստծու: Այս արարողությունը կոչվեց թլիքատում:

Մի քանի ազգերի մեջ թլիքատում եյին, յերբ յերեխանները չափահաս եյին դառնում: Թուրքերը տղաներին, իսկ հնդկացիք և ուրիշ հին ազգերն աղջիկներին, յերբ սկսում են ամսական ունենալ:

Վոր սրանք աստծուն զոհեր եյին, հաստատում ե աստվածաշունչը, ուր պատմվում ե, վոր Մովսեսը մոռացավ յուր վորդիներից մինին թլիքատել: Սատված դրա համար սպառնացավ մահ: Այս ժամանակ Մեփովրան վորդուն թլիքատեց, արյուն թափեց և մանկան մարմի մասը տվեց աստծուն, վորից հետո աստված Մովսեսին ներեց:

Համարյա բոլոր հին ժողովուրդները սովորություն ունեյին զոհեր իրենց անդրանիկները, վորոնց գիշերով հավաքում եյին տաճարի քրմերի կողմից ուղարկված մարդիկ. այդ ժամանակից հոռմում մնաց մի ավանդություն, վոր նորածիններին հափշտակում են չար վոգիները՝ «ստրիգները», և յեթե տան շեմքին չսրսկեն խողի ձագի արյուն, վոգիները կսպանեն

մանկան: Նույնը մենք պատահում ենք աստվածաշնչի մեջ, ուր պատմվում ե, վոր յերբ աստված կոտորում եր յեղիպտացոց բոլոր անդրանիկներին, Մովսես հրեաններին հրամայեց մի-մի գառ մորթել և արյունը խաչաձև քսել դռներին: Մահվան հրեշտակը, արյունը ստանալով, հետո ել հոգու մի մասը, ել ներս չեր մտնիլ և մանկան ձեռք չեր տալ:

Հայերի մեջ ևս մանկանց՝ չար դեերի կողմից այս հափշտակության կամ նույնիսկ մոր արգանդում սպաննելու մասին ալքի ավանդությունը կար: Ալքը ապրում եր գետի կամ լճի մեջ, հաճախ յեղեգնուտում, և գիշերը, մտնելով ծննդականին սենյակը, մանուկը գողանում եր կամ խեղդում, թողնում: Նույնը պատմվում ե և Արտաշես թագավորի Արտավազդ վորդու մասին, վորին դեերը գողացել են և տեղը ուրիշը դրել:

Այսպես, մարդիկ վայրենությունից դուրս գալուց հետո մարդկային զոհերը փոխարինել են արյան կամ մարդկային մարմնի մի մասնիկով կամ կենդանիներ զոհելով զառներ, աղամիներ, խողեր, կովեր և ձիեր, նայելով թե ում ինչն եր հաճելի կամ ավելի գնահատվում: Այսպես եր մարդկանց մեջ, յերբ նրանք պարապում եյին վորսորդությամբ, անասնապահությամբ կամ ավրում եյին պատերազմով և նվաճած ժողովրդի աշխատանքով ու նրանցից վերցրած հարկով:

Իսկ յերբ մարդիկ սկսեցին պարապել զլիսավորապես յերկրագործությամբ, սկսեցին զոհաբերել աստծուն՝ հաց, ձեթ, գինի, բայց արյունից միանգամից ձեռք չփերցրին: Հին Հոռմում Բելլոնայի քրմերը կտրում եյին իրենց ձեռները և արյունը սրսկում կուռքի վրա, իսկ պրովուլավ բողզարները այժմ ել ո. Դեռօրդի տոնին գառ են մորթում և արյունը խաչաձև քսում յերեխանների ճակատին և տան դռներին:

Սակայն այս արյունալի զոհաբերությանց մնացորդների հետ հաց, գինի և ձեթ զոհելը զնալով տարածվում ե: Այս պիտի քաջալերեյին իրենք քահանաները, վորովհետև հավատացյալները խաղաղ զոհաբերությամբ միենույն ժամանակ մատակարարում եյին քրմերին՝ ցորեն, գինի և ձեթ:

## ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Բարքերի մեղմանալը մեր նախորդներին աստիճանաբար հեռացնում եր գաղանաբարո արյունաբու ծեսերից։ Մարդկանց սպանելը փոխարինվում ե մի քիչ արյուն թողնելով, մատը կտրելով, թլփատելով, աղջիկներին տաճարում կուսությունից զրկելով։

Համարյա թե միաժամանակ անդամներ խեղելու հետ սկսվել է և սուրբ լվացումը, վոր այժմ մկրտություն են անվանում։ Այս ծեսը գոյություն ուներ քրիստոնեությունից շատ առաջ։ Որինակ, հրեաների Թալմուդում ասվում ե. «Ամեն վոք, վոր ցանկանում ե հրեա դառնալ, պիտի թլփատվի, իսկ յերբ վերը լավանա, պիտի ամբողջովին ջրով լվացվի յերեք ուարբի ներկայությամբ»։ Վերջապես, Հովհաննես Մկրտիչն ել, ըստ ավետարանի ավանդության, մկրտում եր դեռ քրիստոնեության քարոզությունից առաջ։

Հին սկանդինավցոց ո. գրքի մեջ Ողինը, պատերազմի աստվածը, պատվիրում ե. «Յեթե յես ցանկամ, վոր մարդը չկորչի պատերազմում, յես նրան կսրսկեմ ջրով, հենց վոր նա ծնվի»։

Զուրը բոլոր ժողովուրդների մեջ ել համարվում եր աստվածային, սուրբ, վորովինետե առանց ջրի չի կարող ապրել վոչ մի եյակ։ Տաճարների մոտ միշտ ջուր ե յեղել։ Հեթանոս հռոմում և հեթանոս Հունաստանում նորածիններին տանում եյին տաճար՝ տղաներին իններորդ որը, աղջիկներին՝ ութերորդ, և սուրբ անոթների ջրով սրսկում եյին և մինչնույն ժամանակ՝ անուն եյին դնում։ Շատ ժողովուրդների մեջ նորածինների մագերը խուզում և այրում եյին հենց տաճարում, սեղանի վրա։

Հին ամերիկացի ժողովուրդ ատցեկները պաշտում եյին ջրի աստված՝ յերկը իշխանին, և քրիստոնեականին շատ նման ծես եյին կատարում, թեև ատցեկները ապրում եյին աշխարհի մյուս ծայրում, ովկիանոսի մյուս կողմը, և այս ծեսը հնարժած է քրիստոնեությունից հաղար տարի առաջ, մինչև անգամ ալելի առաջ, քան Հունաստանի և Հռոմի հեթանոսների մեջ նրա յերեալը։

Քուրմը վերցնում եր յերեխային, վրան ջուր սրսկում և աղոթք կարդում. «Ո՞վ մանուկ, ընդունիր աշխարհի իշխանի ջուրը. սա լվանում ե և մաքրում։ Թող այս կաթիլները լվանան այն մեղքը, վորը մտավ քո մեջ նախ քան աշխարհի ստեղծագործությունը, և վորը այդ ժամանակից մեզ իր իշխանության մեջ ե պահում»։

Հետո յերեխայի վրա ջուր եյին ածում, և քուրմը անում եր, «Դու, վոր կարող ես վսասել յերեխային, թեղ նրան, հեռացիր նրանից։ Հեռացիր, վորովհետեւ այս բոպեյիս նա վերածնվում ե մի նոր կյանքի, մաքրվում ե ամեն մի կեղտից»։

Կոշանակե, մկրտության ծեսն ել մի տեսակ զոհաբերության ծես ե, վորովինետե մկրտվողը այսպիսի անարյուն ճանապարհով զոհ ե բերվում աստծուն, նրան ե նվիրվում, և այն աստծու կամ բարի վոգու անունը, վոր գնում եյին մանկան վրա, սրան դարձնում եր նրա ծառան, իսկ աստվածը դառնում եր մանկան հովանավորը։

Մկրտիվածը, ի պատիվ այդ աստծուն, պետք ե զոհեր ու ընծաներ մատուցաներ նրա տոնին։ Այլ խոսքով, նա պիտի կատարեր իր տոնշնորհավորեքը։

Այս ծեսը կատարում են տղինության պատճառով նաև քրիստոնյաները, թեև նրանք այլևս չեն հավատում ջրի աստծուն և թլփատություն չեն անում։ Ճիշտ ե, քրիստոնյաները այս հեթանոսական սովորությունը փոփոխել են և ջրի աստծու աեղ գրել մի նոր աստված, Քրիստոսին, և աղամբի-աստծու տեղ՝ սուրբ հոգուն։

## ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈՒ ՄԱՐՄՆՈՎ ՅԵՎ ԱՐՅՈՒՆՈՎ

Վորպեսզի հասկանանք հաղորդության խորհուրդը, վորը քրիստոնեական աստվածպաշտության ամենից գլխավոր ծեսն ե, ելի հարկավոր ե զիտենալ, թե վճրտեղից ե ծագել այդ ծեսը։ Մենք այժմ զիտենք, վոր հին հեթանոս կրոնները հնարել են այսպիսի հեքյաթներ։

1) աստվածները և վոգիները կարող են ամեն տեսակ մարմին ստանալ — մարդու, կենդանու, քարի, ծառի, ջրի և այլն:

2) աստծուն, նրա ոգնության համար, հարկավոր են զոհեր, իսկ յեթե այդ չինի, աստված կբարկանա: Զոհերը քավում են մարդկանց մեղքերը: Պաշտել աստծուն, կնշանակեա տալ նրան ամենալավը.

3) աստվածների և մարդկանց հոգիները (ինչպես և կենդանիների ու թռչունների հոգիները) արյան մեջն են: Ուտել վորեւ մեկի մարմինը և խմել արյունը — կնշանակե՝ իր հոգուն ավելացնել կերպածի հոգին:

Այս հիշելով, մենք հեշտությամբ կհասկանանք, թե ինչպես նախնիք հասել են քավության զոհերին: Արդեն ասացինք, վոր հեթանոսները, կնքելով իրենց ձևով — հեթանոսաբար, իրենց յերեխաներին գրանով ել նվիրում եյին իրենց աստծուն Զեռնազրությունն ել ավելի հասասառում եր այս նվիրումը: Բայց շուտով կնունքի և ձեռնազրության ծեսերի հետ հայտնիք մի ուրիշ ծես, նման կրոնավորության (աբեղայության): Անդրանիկ տղաներն ու աղջիկները, հաղիկ կտրվելով ծնողներից, նվիրվում եյին տաճարում աստծու պաշտաման:

Տաճարի քրմերը պահանջում եյին պատանիներից ու աղջիկներից վողջախոհ կյանք. յեթե աղջիկը մեղանչում եր, նրան կենդանի (վողջ-վողջ) թաղում եյին կամ քարկոծում: Սակայն քրմերը՝ վորոշ ժամանակում պատանիներին թլփառելով, կարող եյին ընտրել իրենց համար աղջիկներ և խախտել նրանց կուսությունը (կուսությունից գրկել): Հետո տղաներն ել, աղջիկներն ել բաց եյին թողնվում դնալ իրենց ծնողների մոտ:

Հրեաները, յերբ դեռ նրանք հեթանոս եյին և պաշտում եյեն Բահաղին և դիցուհի Աշերին, տաճարում սովորաբար պահում եյին հարյուրավոր աղջիկներ, վորոնք քրմերի հարճերն եյին, և տոներին, սուրբ գիշերը, վաճառում եյին ուխտավորներին, ստացած փողով զարդարում եյին տաճարը և աստծուն զոհեր անում:

Այս սովորության մնացորդները պահպած են հրեից «ռաբբի» (քահանա) անվան մեջ. «ռաբբի» բառը կնշանակե՝ «կուսության

ծաղիկը քաղող»: Պատանիների նկատմամբ այդ արվում եր թլփառելով, իսկ աղջիկների նկատմամբ՝ ամուսնական գգվանքով: Ամելի ուշ՝ Յերուսաղեմի տաճարում նույնպես կային աղջիկներ, տաճարին նվիրված. նրանց թվում եր և Մարիամը, Քրիստոսի մայրը, ինչպես պատմում ե այս մասին ավետարանը:

Տաճարում այս կուսածին յերեխաները համարվում եյին աստվածների զավակներ: Այսպես եր Յեղիպտոսում, Ողբիրիսի տաճարում, այսպես եր և Հնդկաստանում, Բրահմայի տաճարում, այսպես եր Պարսկաստանի Միտրա աստծու տաճարում, նույնը և հունաց, Հռոմի և հայոց տաճարներում: \* Ճիշտ ե, ամեն տեղ տարբեր կերպով, բայց եյապես միենույնն եր:

Հավատացյալները քրմերի աղդեցությամբ, վորոնք ուրախ ու հաճույքներով լի կյանք եյին անց կացնում, հավատում ու սպասում եյին, վոր այս բոլոր կույսերից կհայտնավի մեկը, աստըծու ընտրյալը, և կծնի մեսսիան, խկական աստվածորդուն: Մեսսիան կհաղթե բոլոր թշնամիներին, թագավոր կդառնա, կնվաճե ամբողջ աշխարհը և իր ժողովուրդին տեր ու զուխ կդարձնե մյուս ժողովուրդների վրա:

Այսպիսի կույսերից ծնված աստծու վորդիներ, այսպիսի հավատալիքներ ունեցել են բոլոր ժողովուրդները՝ նախ քան քրիստոնեությունը. որինակ, յեգիպտացոց աստվածորդի Գուրուսը, պարսից աստվածորդի Միտրան, հնդկաց աստվածորդի Կրիշնան, հայոց Միհրը: Սրանց մասին մանրամասն կխոսենք հետո, իսկ հիմա անցնենք հաղորդության խորհրդին:

Հին հեթանոսները, հավատալով վոր աստված կարող ե մարդանալ կամ գաղանի մարմին առնել, յեկան այն մտքին, վոր յեթե իրենք ուտեն այդ մարդուն կամ կենդանուն և նրա արյունը խմեն, այն ժամանակ աստծու մի մասը մարմնի և արյան հետ կանցնի նրանց մեջ, նրանց առողջ, զորավոր կդարձնե, կպաշտպանե դեմք, ցավերից և թշնամիներից: Ուստի Մեքսիկայի հեթանոս ատցելները իրենց գլխավոր աստվածներից մինին:

\* Սարարնի վկայությամբ հայոց Անահիտ գիցունուն հատկապես նվեր եյին բերում աղջիկանները, նախարարները իրենց աղջիկներին: Տաճարի պաշտոնյանները նրանց կուսությունը առնելուց հետո, մի առժամանակ իրենց յեկամտի առարկա եյին գարձնում, ապա վերադարձնում ծնողներին:

Ցկալիպոկին պաշտելիս այսպես եյին անում. — ընտրում եյին գերիներից ամենագեղցիկ պատահի, բերում կուռքի մոտ և խոստանում նրան զոհել: Այն ժամանակ Ցկալիպոկը՝ զանազան արարողություններից և աղոթքներից հետո՝ մտնում եր այդ պատանու մարմնի մեջ: Այդ որվանից պատանին հայտարարվում եր աստված, նրան հազցնում եյին աստվածային զգեստներ, թանգագին վոսկեղեն և ակնեղեն զարդերով զուգում, զարդարում, հանձնում նրան աստվածային նշաններ, յերկրպագում նրան, աղոթում և զոհեր մատուցանում: Տաճարին նվեր բերած աղջկերից չորս ամենից գեղեցիկներին տալիս եյին նրան հարճ: Շատ լավ կերակրում ու խմեցնում եյին նրան, կատարում նրա բոլոր ցանկությունները՝ բացառությամբ մեկի—ազատության: Այսպես նա ամբողջ տարին անց եր կացնում իր որերը խընջույքներով ու իր հարճերի զգվանքով:

Վերջին գիշերը պատանին իր կանանց հետ միասին դուրս եր զալիս քաղաքից: Բայց յերբ հասնում եր վորոշյալ մութ փողոցը, հանդիպում եր ու պատմումաններ (վերարկուներ) և դիմակներ հագած քրմերի խմբին: Նրանք հարձակվում եյին պատանի-աստծու վրա, խուզում մազերը, նետում սուրբ քարի վրա, կոկորդից բռնելով խեղում, կուրծքը ճղում և, սիրաը հանելով, նրա արյունը քառում Ցկալիպոկի շրթունքներին, ապա նրա դեռ բարախուն մարմինը սանդուխքներից նետում եյին ցած հավատացյալներին, վորոնք նրան հողատում ու լափում եյին:

Այսպես եր հեթանուների ճաշակվելը, այսինքն հաղորդությունը աստծու հետ, այն ե՛ ուտելով նրա մարմինը և խմելով նրա արյունը:

Նույնն են անում այժմ ել ավստրալիայի վայրենիները՝ պապուաները: Բայց նրանք մարդ չեն սպանում, այլ կենդանի, վորին մինչև սպանելը ամեն տեսակ աստվածային պատվերներ են տալիս, հավատալով, վոր նրա մեջ աստված կա: Առանձին արարողությամբ նրան սպանելով, վայրենիները նրա արյունը լցնում են մի անոթի մեջ և միսը մաս-մաս անում: Ամեն հավատացյալ ստանում ե մարմնի մի մասը և ուտում աստվածային արյան հետ:

Հաղորդության այս ծեսը յեղել ե և հին հրեաների մեջ, վորովինետև նրանք այժմ ել չեն ուտում «տրեֆի» միս,\* այլ միայն «կոշերի», այսինքն այնպիսին, յերբ զառը կամ հորթը մորթում ե առանձին հոգերը անձն, կատարելով զանազան ծեսեր և աղոթքներ, և արյունը մասից ջոկում:

Հեղիետե, բարքերի մեղմանալու հետ՝ մարդու և կենդանու մարմնով և արյունով աստծու հետ հաղորդությունն, ի վերջո, դարձել ե հացի ու ջրի, հացի ու գինու հաղորդություն:

Այսպես, հին պարսիկները, Միտրա աստծուն յերկրապագելիս, որհնում եյին հացն ու ջուրը նրա տաճարում, միենույն ժամանակ բոլոր հավատացյալների վրա խաչի նշան քաշում, արև-աստծու նշանը:

Ուրիշ հին կրոններում սկսեցին խմորից շինել այս կամ այն աստծու պատկերը. սկզբում խմորը շաղախում եյին մարդկային կամ գաղանի արյունով: Այս աստվածները կոչվում եյին ուտելու աստվածներ:

Հին պերուխցի (Ամերիկայում) քրմերը, խմորը շաղախելիս, ձեռները կտրելով, մի քիչ արյուն եյին հանում և լցնում խմորի մեջ: Հետո այդ խմորով հաղորդվում:

Հնդկաստանում, աստվածապաշտության ժամանակ, քրմերը վերցնում եյին խմորից թիած աստծու պատկերը, կտոր-կտոր անում, հետո կտորները ժողովրդին բաժանում: հավատացյալները ուտում եյին այս կտորները յերկյուղածությամբ և աղոթքով, վորի մեջ ասվում եր, վոր նրանք աստծու մարմինը և վոսկորներն են ուտում: Յեթե տանը հիվանդ պատահեր, քրմերը հաղորդությունը տալիս եյին տուն տանել հիվանդների համար:

Հին սկանդինավցիների քրմերը սեղանի վրա որհնում եյին հաց ու գինի: Խորհուրդը կատարում եյին բորիկ, մաքուր լվացած վուներով:

Այս հաղորդության ծեսը անցել ե քրիստոնյաներին, վորոնք, ուտելով հաց ու գինին, անկեղծ հավատում են, վոր խսկապես Քրիստոսի մարմինն են ուտում և արյունը խմում:

\* Տրեֆի միս կոչվում ե մսագործի ծախած միսը, իսկ կոշերի միս կոչվում է ապրու ձեռքով մորթած կենդանու միսը.

Այդպիսի բարբարոս մի սովորություն՝ ուստել իրենց աս-  
աըծուն՝ պահվել ե այժմվա կրօններում, թեև ասածու միսն  
ու արյունը փոխարինված ե հաց ու գինիյով։ Ահա թե ինչպիսի  
վայրենի մի սովորություն ե մեր որերում՝ գիտության որե-  
րում՝ պահպանում կրոնը, կաշկանդելով միլիոնավոր խավար ու  
անկիրթ մարդկանց։

## ԱՍՏՎԱԾՈՐԴԻՆԵՐԸ — ՄԵՂՔԵՐ ՔԱՎՈՂՆԵՐ

Ինչպիս արդեն հիշատակեցինք, աստվածորդիներ խիստ  
շատ եյին։ Նրանցից մի քանիսների մասին հիշատակվում ե քրիս-  
տոննեռթյունից ել վեց հազար տարի առաջ, մյուսների մասին՝  
յերեք հազար տարի, յերրորդների մասին՝ շատ ավելի ուշ՝ քրիս-  
տոննեռթյունից հազար տարի առաջ։ Այս բոլոր աստվածների  
ծնունդն ել վերադրվում ե միշտ դեկտեմբերի 25-ին, յերբ սկսվում  
է որը յերկարել։ Այսպիս, այդ ժամանակ ծնվել ե Հնդկաց աշխարհի  
փրկիչը և մեղքերի քավիչ Կրիշնան։ Յեզիրապոսում դեկտեմբե-  
րի 25-ին տոնում եյին փրկիչ և մեղքերի քավիչ Գորուս աս-  
տծու, վորդի Ոզիրիսի և անարատ կույս դիցունի Նեյդի ծնունդը և  
այդ դիցունուն աղոթքների մեջ կոչում եյին յերկնային թագունի։

Բարելոնում կար Թամմուզ աստված։ Նրան պատվում եյին  
իրը աշխարհի փրկիչ և նկարում իրը մանուկ իր մոր՝ Խստարի  
գրկում։

Հին պարսիկներն ունեյին իրենց անարատ յերկնային թա-  
գունին, վորին նույնալես նկարում եյին մանուկը գրկում։ Այս  
մանուկը արեի աստվածն եր, և նրա ծնունդը տոնում եյին  
դեկտեմբերի 25-ի մոտ։ Դա Միտրա աստվածն եր, նույնը և  
հայոց Միհրը, վոր կարելի յե թարգմանել փրկիչ։ Սակայն հայոց  
մեջ Միհրի տոնը կատարում եյին ավելի ուշ, մարտի գիշերա-  
հավասարին, վորի ժամանակ խարույկներ եյին վառում և խըն-  
ջույքներ սարքում, խարույկի շուրջը պարում ու կրակի վրայով  
թռնում։

Հին սկանդինավիացիների ամենամեծ տոնը Թրեյյեր աստծու  
(Ոդին աստծու և Ֆրեյա կույսի վորդու) ծնունդն եր։

Զինացիների փրկիչը և մեղքերի քավիչը, Բուդդան, ծնվել ե  
Շինգ-Շին աստծուց և կույս Մայա մորից։ Նրա ծնունդը ծա-  
նուցվել ե աշխարհին ամբողջ մի համաստեղություն յերևալով։ այդ  
աստղերի խումբը կոչվել ե «փրկչական համաստեղություն»,  
սա քրիստոնեռթյունից հազար տարի առաջ ե պատահել։

Հին հոռմայեցիք ամեն տարի, դեկտեմբերի 25-ին, տոնում  
եյին աստվածների ծնունդը։ Ամբողջ յերկրում ման եյին ածում  
նորածին աստծու կառքը՝ մանկական որորոցը՝ աղոթքներով։  
Այս սովորությունը պահվել ե հոռմեական քրիստոնեական յեկե-  
ղեցու մեջ, ուր այժմ ման են ածում մանուկ Քրիստոսի ար-  
ձանը — Քրիստոսը մսուրում։

Քրիստոսի, աստվածորդու, փրկիչի ծնունդը նույնպես տո-  
նում են դեկտեմբերի 25-ին։ Քրիստոս նույնպես ծնվել ե  
և կույս Մարիամից, այս կույսերից մինը, վորոնք նվիրված  
եյին տաճարին և Յեհովա աստծուն։ Նրա ծննդյան որը, ինչպես  
և Բուդդայի ծննդյան որը, յերեաց մի նոր աստղ։

Դուրս ե գալիս, վոր այս աստվածները ուրիշ բան չեն՝  
յեթե վոչ, հեթանոսական արևի աստվածը, վոր ծնվում ե ձմեռվա  
կիսին, յերբ շրջում ե «արել գեպի ամառ, իսկ ձմեռը՝ դեպի  
սառնամանիք»։ Սկսում են որերը յերկարել, ծնվում ե լույսը  
և նրա աստված՝ արել։ Յեվ, հիրավի, Յեզիրապոսում փրկիչ Ոզի-  
րիսը ձմեռը մեռնում եր, նրան սպանում եր խավարի աստված  
Սեթը, և յուրաքանչյուր գարուն հարություն եր առնում։

Բարելոնում, յերբ փրկիչ Թամմուզը մեռնում եր, նրա վրա  
կոծ եյին անում, նրա վարշամակը ման եյին ածում։ Յերեք  
որ համարվում եր մեռած, իսկ հետո հարություն եր առնում։

Պարսկաստանում աշխարհի փրկիչ Միտրա աստվածը, իր  
վրա բառնալով աշխարհի մեղքերը, յերեք որ պառկում եր գե-  
րեզմանում, իսկ յերրորդ որը հարություն առնում, վորի մասին  
Միտրայի աշակերտները, վոր գերեզմանի մոտ եյին լինում,  
ցնծպին հայտնում եյին հավատացյալներին։

Հեթանոս Հոռմում մեռնում եր Բարոս աստվածը, բայց  
յերրորդ որը նրան հարություն եր տափս աստվածների հայր  
Յուպիտերը։

Հին մեքսիկացիների սուրբ գրքերի ասելով, կար նրանց մի աստված՝ Կվեցակոայլ, վորը յերկիր իշխավ մարդկանց փրկելու համար, բայց մարդիկ նրան չընդունեցին և փայտի խաչի վրա խաչեցին:

Յուկատանի (Ամեր.) հին քնակիչներն ունեցին իրենց փրկիչը բակար անունով։ Նա աստծու և կույս Զիրիբիրիխասի վորդին եր և աստվածային յերրողության յերկրորդ անձը։ Նրան պատկերացնում է յին ճիպոտներով ծեծած (զանահար), վորոնց փշերը խրված եյին մարմնի մեջ։ Նրան մեխել են (զամել) փայտյա խաչին. մեռած մնացել ե յերեք որ, հետո հարություն և առել և յերկինք համբարձել։

Փրկչի տանջանքների մասին յեղած այս հեթանոսական պատմվածքները ամբողջովին անցել ե քրիստոնեության։

Նա մեզ ասում ե նախկին անգթությունների և մարդկային գոհերի մասին, յերբ մարդուն աստված եյին հոչակում, նրան գոհում եյին աշխարհի մեղքերի համար, իսկ հետո ուտում եյին նրա մարմինը և խմում արյունը։

Այսպես, մարդկային տղիտությունը և անգթությունը թեև անհայտացել եր, բայց նրանց հետքերը մինչև մեր որերը մնացել եյին քրիստոնեական կրոնի մեջ, վորը միայն փոփոխումն ե հին հեթանոսական հավատալիքների, վորոնք արել աստված եյին համարում, իսկ խավարը՝ դե։

Հենց աստվածների անունները այդ են հաստատում։ Սարառվթ աստծուն և Քրիստոսին անվանում են լույս, լուսո աստված։ «Լույս ի լուսո, առաջին լույս» Քրիստոսին՝ «արեգակն, արդար՝ թյան», իսկ դիկն՝ «իշխան խավարի»։

Ուստի քահանաների կոչը՝ «առեք կերեք, այս ե մարմինն իմ, արքեք ի սմանե ամենեքյան, այս ե արյունն իմ» մեզ հիշեցնում ե այն ժամանակները, յերբ մարդիկ սպանում եյին մարդկանց, հոշոտում եյին դեռ դողոջուն մարմինը, ուտելով նրա մասնիկները, խմում եյին իրենց զոհի տաք արյունը «ի թողություն մեղաց» և աստծու հետ հաղորդվելու համար։

## ԿՐՈՆԸ ՅԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Այսպիսով մենք բավական մանրամասն ծանոթացանք բոլոր գլխավոր կրոններին, իսկ դրանք շատ են։ Բացի այդ կրոններից, կան դեռ շատ, ել ավելի անմիտ, անգութ և մարդկանց համար ել ավելի մնասակար կրոններ։ Այս բոլորը միասին կաշկանդում են մարդկային միտքը և արգելում խավարը փարատելուն, վորովինետև յուրաքանչյուր հավատ համարում ե, թե ինքը ճանաչում ե ճշմարտությունը լրիվ և այլևս վոչինչ չի մնացել մեկին իմանալու։ Հավատա ամեն բանի, հնագանդիր քո հոգեոր հայրերին, նվերներ տուր տաճարին, ընծաներ բեր սրբազնագործ պաշտոնյաներին և չհամրձակվես դատել։

Ուստի ամեն կրոն, ամրանալով ժողովրդի մեջ և մանաւանդ դառնալով պետական կրոն, վոչնչացնում ե բոլորին և բոլորը, յեթե չեն ճանաչում նրան։ Անհավատներին և հերետիկուներին մահվան պատիժ եյին տալիս. այրում եյին խարույկի վրա, վայրի գաղանների առաջ դցում, խեղդում, կախում։

Այսպես եյին վարվում հոռմայեցի քրմերը, հեթանոսները, յերբ առաջին անգամ յերևաց քրիստոնեական կրոնը։

Այսպես սկսեցին վարվել քրիստոնյա յեպիսկոպոսները, յերբ քրիստոնեությունը դարձավ պետական կրոն։ Խտալիայում և իսպանիայում տիրող հավատը միջին դարերում — հոռմա-կաթոլիկական հավատն եր, և ահա հանուն Քրիստոսի ամեն տարի խարույկների վրա եյին այրում այն մարդկանց, վորոնք այլ կերպ եյին մտածում, քան կաթոլիկ յեկեղեցին։

Բացի սովորական մարդկանցից, կաթոլիկները վողջ-վողջ այրում եյին նշանավոր գիտնականների։ Այրեցին Զիորդանո Բրունոյին, վոր ուսումնամիրում եր յերկնային լուսատուները, հալածվեցին և տանջանքի մատնվեցին գիտնականներ՝ Կովերնիկոսը և Գալիլեյը, վորոնք ապացուցում եյին, վոր յերկիրը գունդ ե, վոր նա շարժվում ե արևի շուրջը, իսկ լուսինը՝ յերկը շուրջը։ Հայտնի բժիշկ Սերվետը առաջինը գտավ, վոր արյունը շարժվում ե մարդու մարմնի մեջ, սրտից դեպի

թոքերը, և հակառակը, բայց սուրբ յեկեղեցին վճռեց, վոր այդպես չեմ, և վողջ-վողջ այրեցին Սերվետին խարույկի վրա:

Թուրքերը՝ ի հաճույս իրենց ալլահին՝ բոլոր անհավատներին մորթում եյին, սկսած ծերունիներից մինչև յերեխաները, իսկ կանայք տարվում եյին հարեմ իրանց զվարճության համար:

Նախկին Ծուսաստանում յեկեղեցին, հիմնվելով թագավորակերի վրա, նույնպես հալածում եր հերետիկոսներին և հերձվածողներին: Հովհաննես յերրորդի ժամանակ, որինակ, Նովկորոդում փոչնչացրին ստրիգոնիկների աղանդին պատկանողների մինչև վերջին մարդը: Մինչև հեղափոխությունը Ծուսաստանում հալածում եյին հնածեսներին, իսկ յեկեղեցին քննադատողներին բանտ եյին նստեցնում:

Ծուսաստանում ել յեղել են գիտության գոհեր: Հովհաննես Ահեղի որով, մոտ հինգ հարյուր տարի առաջ, Մոսկվայի մի վարպետ հնարել եր թոշող մեքենա, ինքնաթիռ, առանց շարժի չի: Նրա սավառնակը թոշում եր հողմի ուղղությամբ և կառավարվում եր թեկով և ղեկով. շնչված եր փայտից: Թագավորը հրամայեց ցույց տալ, թե ինչպես ե թոշում: Վարպետը բարձրացավ կրեմլի աշտարակի վրա և, սպասելով հարմար հողմի, թուագ: Այն ժամանակ թագավորը և բոյարների ու յեպիսկոպոսների խորհուրդը, տգետ մարդիկ, վճռեցին, վոր աստված թույլ ե տպել թռչել միայն թոշուններին և միջատներին, և վոչ թե մարդուն: Յեթե մարդը սկսել ե թռչել, կնշանակե՞ նրան ոգնում ե դեռ:

Մեքենան այրեցին, իսկ վարպետի գլուխը կտրեցին. այսպես ել այդ դորձը վոչնչացավ: Հետաքրքիր ե, ինչ սարսափով կրոնվեր թագավորական խորհուրդը, յերբ տեսներ այսորվագնացքները, շոգենավերը, ջրասույզ նավերը և սավառնակները: Նրանք անշուշտ կորոշեցին, վոր հասել ե աշխարհի վերջը, քանի վոր թոշում են, լողում են, գնում են՝ աստծու պես, դեկի պես:

Հայոց յեկեղեցին ել X դարում խիստ հալածանք հանեց թոնդրակեցի աղանդավորների դեմ, վորոնք մերժում եյին յեկեղեցու նվիրապետությունը, յեկեղեցու բոլոր խորհուրդները, հանդերձյալ կյանքը, հոգու անմահությունը, վոչ մեղ,

ոչ ել մեղքի համար պատիժ: Աղանդավորների առաջնորդների ակատները աղվեսաղրոշմով դաղեցին, նրանց գյուղերն ու ալվածքները այրեցին ու ավերեցին. ահա այսպես, հրով ու սրով, երջ դրին այս շարժման:

Բայց գիտությունը, չնայած վոր յեկեղեցու հայրերը ամեն այլում նրան խանդարում եյին, գիտնականներին սպանում, ոյնուամենայնիվ հաղթեց և լուսավորեց մեր խավար կյանքը—եւ ասմամբ և՛ իր բոլոր հրաշքներով—ելեքտրական լույս, հեռագիր, լանազան մեքենաներ, նույնիսկ ծերերին յերիտասարդացնելը: Եյն բժիշկների մոտ, վորոնց նմաններին առաջ խարույկի վրա սյրում եյին, ինչպես սատանայի արբանյակների, այժմ բժշկվում են թե քահանաները, թե ավագ-յերեցները և թե աբեղաները: Հիվանդությունները այժմ հալածում են վոչ թե աղոթքով և հաղորդությամբ, այլ դեղերով:

Այսպես հաղթեց գիտությունը խավար նախապաշարմունքին, մերկացրեց բոլոր կրօնների ստությունը, հիմարությունն ու քին, մերկացրեց բոլոր կրօնների ստությունը, հիմարությունն ու տիմարությունը և մարդկային մաքին տվեցնոր կերակուր՝ ուսում: Գիտությունը և աշխատանքը իրար հետ դաշնակցած, վերաշնուրմ և բարփոքում են վոչ միայն մարդկային ամբողջ կյանքը, շինում և բարփոքում են վոչ միայն մարդկային ամբողջ կյանքը, այլ և մարդուն իրեն փոփոխում են դեպի լավը, փոփոխում են յերկրը, անապատները դարձնում են ծաղկապատկան պարտեզներ, յանելով այնտեղ, ուր չկար այն: Գիտությունը և աշխատանքը մարդկապատկանին դարձրել են յերկրի իշխանը, իսկ այսոր հաղթում են նույնիսկ ծերության:

Զանազան իշխաններ և թագավորներ ստեղծել են իրենց համար ստրուկներ, իսկ յեկեղեցին մտացածին աստվածների անունով բոլոր հավատացյալներին իրեն ստրուկ ե դարձրել: Ցել ահա հեղափոխությունը, ազատելով ստրուկներին իրենց տերերից, մեզ հնարավորություն ե տալիս ազատել կրոնի ստրությունից, տգիտության ստրությունից:

Ուստի ամեն մարդ ամենից առաջ պետք ե սովորի, հիշելով, վոր ուսումը լույս ե, իսկ տգիտությունը՝ խավար:

թոքերը, և հակառակը, բայց սուրբ յեկեղեցին վճռեց, վոր այդ-  
պես չե, և վողջ-վողջ այրեցին Սերմետին խարույկի վրա:

Թուրքերը՝ ի հաճույս իրենց ալլահին՝ բոլոր անհավատնե-  
րին մորթում եյին, սկսած ծերունիներից մինչև յերեխաները,  
իսկ կանայք տարվում եյին հարեմ իրանց զվարձության համար:

Նախկին Ծուսաստանում յեկեղեցին, հիմնվելով թագավոր-  
ների վրա, նույնպես հալածում եր հերետիկոսներին և հերձվա-  
ծողներին: Հովհաննես յերրորդի ժամանակ, որինակ, Նովգորո-  
դում վոչչացրին սարիգոլնիկների աղանդին պատկանողների  
մինչև վերջին մարդը: Մինչև հեղափոխությունը Ծուսաստա-  
նում հալածում եյին հնածեսներին, իսկ յեկեղեցին քննադա-  
տողներին բանա եյին նստեցնում:

Ծուսաստանում ել յեղել են գիտության զոհեր: Հովհան-  
նես Ահեղի որով, մոտ հինգ հարյուր տարի առաջ, Մոսկայի  
մի վարպետ հնարել եր թռչող մեքենա, ինքնաթիռ, առանց  
շարժի չի: Նրա սավառնակը թռչում եր հողմի ուղղությամբ և  
կառավարվում եր թևերով և դեկով. շինված եր փայտից:  
Թագավորը հրամայեց ցույց տալ, թե ինչպես ե թռչում: Վար-  
պետը բարձրացավ կրեմի աշտարակի վրա և, սպասելով  
հարմար հողմի, թռավ: Այն ժամանակ թագավորը և բոյարների  
ու յեղիսկոպոսների խորհուրդը, տգետ մարդիկ, վճռեցին, վոր  
աստված թռչյլ ե տվել թռչել միայն թռչուններին և միջատ-  
ներին, և վոչ թե մարդուն: Յեթե մարդը սկսել ե թռչել, կնշա-  
նակե՝ նրան ոգնում ե դեր:

Մեքենան այրեցին, իսկ վարպետի գլուխը կտրեցին. այս-  
պես ել այդ գործը վոչչացավ: Հետաքրքիր ե, ինչ սարսափով  
կը ունի թագավորական խորհուրդը, յերբ տեսներ այսորվա-  
գնացքները, շոգենավերը, ջրասույզ նավերը և սավառնակները:  
Նրանք անշուշտ կորոշեյին, վոր հասել ե աշխարհի վերջը, քանի  
վոր թռչում են, լողում են, գնում են՝ ասածու պես, դեի պես:

Հայոց յեկեղեցին ել Խ դարում խիստ հալածանք հա-  
նեց թոնդրակեցի աղանդավորների դեմ, վորոնք մերժում եյին  
յեկեղեցու նվիրապետությունը, յեկեղեցու բոլոր խորհուրդ-  
ները, հանդերձյալ կյանքը, հոգու անմահությունը, վոչ մեղք,

վոչ ել մեղքի համար պատիժ: Աղանդավորների առաջնորդների  
ճակատները աղվեսադրոշմով դադեցին, նրանց գյուղերն ու  
կալվածքները այրեցին ու ավերեցին. ահա այսպես, հրով ու սրով,  
վերջ դրին այս շարժման:

Բայց գիտությունը, չնայած վոր յեկեղեցու հայրերը ամեն  
քայլում նրան խանդարում եյին, գիտնականներին սպանում,  
այնուամենայնիվ հաղթեց և լուսավորեց մեր խավար կյանքը—և  
ուսմամբ և իր բոլոր հրաշքներով—ելեքտրական լույս, հեռագիր,  
զանազան մեքենաները, նույնիսկ ծերերին յերիտասարդացնելը:  
Այն բժիշկների մոտ, վորոնց նմաններին առաջ խարույկի վրա  
այլում եյին, ինչպես սատանայի արբանյակների, այժմ բժշկվում  
են թե քահանաները, թե ավագ-յերեցները և թե արեղանները:  
Հիվանդությունները այժմ հալածում են վոչ թե աղոթքով և  
հաղորդությամբ, այլ դեղերով:

Այսպես հաղթեց գիտությունը խավար նախապաշարմուն-  
քին, մերկացրեց բոլոր կրօնների ստությունը, հիմարությունն ու  
տիմարությունը և մարդկային մտքին ավեց նոր կերակուր՝ ուսում:  
Գիտությունը և աշխատանքը իրար հետ դաշնակցած, վերա-  
ցնում և բարփոքում են վոչ միայն մարդկային ամբողջ կյանքը,  
այլ և մարդուն իրեն փոփոխում են դեպի լավը, փոփոխում են  
յերկիրը, անապատները դարձնում են ծաղկապատկարեցներ,  
յանելով այնտեղ, ուր չկար այս: Գիտությունը և աշխա-  
ջուր հանելով մարդ-գաղանին դարձրել են յերկրի իշխանը, իսկ այսոր  
հաղթում են նույնիսկ ծերության:

Զանազան իշխաններ և թագավորներ ստեղծել են իրենց  
համար սարուկներ, իսկ յեկեղեցին մտացածին աստվածների  
անունով բոլոր հավատացյալներին իրեն ստրուկ ե դարձրել:  
Յեկ ահա հեղափոխությունը, ազատելով սարուկներին իրենց  
տերերից, մեզ հնարավորություն ե տալիս ազատվել կրօնի  
ստրկությունից, աղիտության ստրկությունից:


Ուստի ամեն մարդ ամենից առաջ պետք ե սովորի, հիշե-  
լով, վոր ուսումը լույս ե, իսկ տգիտությունը՝ խավար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վիճաբանություն նույնարդ հավատի մասին . . . . .	62
Ի՞նչպես հայտնվեցին ասվածներն ու դեվերը . . . . .	5
Ի՞նչպես հայտնվեցին մարդանման ասվածները . . . . .	10
Զանազան հավատների խորհուրդներն ու ծեսերը . . . . .	30
Հիւասոկ մեռելոց, քաղում յեվ զոհաբերություն, դժոխ յեվ դրախս Ասվածների յեվ դեվերի խաբեյությունները՝ բրմերի բոլլյալվությամբ	35
Ասվածային խորհուրդները (զաղտնիքները) յեվ զոհերը . . . . .	37
Մկրտություն . . . . .	37
Հաղորդություն ասծու մարմնով յեվ արյունով . . . . .	47
Ասվածուրդիները — մեղքեր բալողներ . . . . .	49
Կրոնը յեվ գիտությունը . . . . .	58
Հաղորդություն ասծու մարմնով յեվ արյունով . . . . .	59
Ասվածուրդիները — մեղքեր բալողներ . . . . .	64
Կրոնը յեվ գիտությունը . . . . .	67

ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐԻՑ ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ  
ՀԵՏԵՎՅԱԼՆԵՐԸ

Սոցիալիզմի ուղին,—Ն. ԲՈՒԽԱՐԻՆ . . . . .	1 ռ. 25 կ.
Ազգային Հարց,—Ի. ՍՏԱԼԻՆ . . . . .	1 ռ. 60 »
Գյուղացիական Հարց,—Ի. ՍՏԱԼԻՆ . . . . .	50 »
Լենին. — Պատգամներ ժողովրդ. լուսավորության մասին	20 »
Լենին. — Պատգամներ յերիտասարդության . . . . .	15 »
Համ. Կոմիտսի (բ) պատմությունը,—Վ. Վ. ՌԵՎԵՆԻՉ . . 1 ռ. 50 »	
Ոպպոգիցին հոսանքները Համ. Կոմ. Կուս. (բ) ներսում	20 »
Բոլլյալվիկների կուսակցությունը 1917 թվին,—	
ԵԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎԾԿԻՑ . . . . .	85 »
Ինչ սկեց Հոկտեմբեր բանվորներին,—Մ. ՏՈՒՄԿԻՑ . .	20 »
1905 թ. մեր Ի-ին բանվորագյուղացիական նեղափոխությունը,—Ի. ՖԼԵՐՈՎԾԿԻՑ . . . . .	70 »
Քաղաքական բառարան, —կազմեց Վ. ԱԲՐԱՄՅԱՆ (656 էջ) 2 ռ. —	
Պատմական մատերիալիզմի այբովենը . . . . .	80 »
Պայմանի յեվ շինարարության 10 տարի,—ՆՈՎԱԿՈՎԾԿԻՑ	70 »
«Ի. ՍՏԱԼԻՆ» (համառ. կենսագր.) . . . . .	7 »
Ինչպես աշխուժացնել զյուղխորհուրդները,—Զ. ԼԱՎՐԵՆՏՅԵՎ	30 »
Պատերազմ շինք ուզում, բայց դիմադրելու պատրաստենի.	10 »
Ինչով և ուժեղ կարմիր բանակը,—ԶՈՐԻՆ . . . . .	15 »
ՄԵՌ, ոդական ձեռնարկ (ուսուցիչների համար) . . . . .	70 »
Նորդպրոցի ճանապարհին (ծոլոված, 480 էջ) . . 2 ռ. —	
Ճանապարհությունը Ի-ին ասինանի դպրոցում,—	65 »
Գեղջկունին յով յերեխանները . . . . .	25 »
Տգիտությունը յեվ սնանակատությունը,—Վ. ԴԻՐԻՏՐԻՅԵՎ	15 »
Ի՞նչպես և սարգված տիեզերքը,—Գ. ԳՐԱՎԾ (նկարագ.)	50 »
Արեվը, երա վորդիները յեվ բռները,—Բ. ՍԵՐԵՅԵՎ (նկ.)	40 »
Ինչպես և առաջացել յեվ զարգացել կյանքը յերկրի վրա,	50 »
Մարդու յեվ կենդանիների ծագումը,—Դ. ԱԳՈՒ (նկ.) .	35 »



Մարդ-մեքենա,—	Դ. ԳՐԵՄՑՈՅՑԿԻ (նկարագարդ)	50	»
Մարդու անհետանելի թշնամիներն ու բարեկամները,—		20	»
Վորոն, կայծակ, ելեքտրականուրյուն,—ԳՐԵՄՑՈՅՑԿԻ (նկ.)		40	»
Պատաճի Պիռներ (ժողովածու, նկարագարդ)		60	»
Պիռներ, հետեւիր Լենինի պատճամներին . . . . .		20	»
Հոկտեմբեր (համառ. պատմ.) . . . . .		10	»
Մեր ավագ յեղբայրները—Կոմիերփականները . . . . .		33	»

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ.ԶԱՐԴԻ ԳՐՔՈՒԹԿՆԵՐ, 25 անուն  
 ԳԵՂԱՐԳՆՍՏԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾԲՆԵՐ, 18 անուն  
 ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ԳՐՔՈՒԹԿՆԵՐ, 8 անուն  
 ԱՌՈՂՉԱՊԱՀԱԿԱՆ ԳՐՔՈՒԹԿՆԵՐ, 6 անուն  
 ԴՊՐՈՑԱԿԱՆ ԶԱՆՅԱԾԱՆ ՊԻՏՈՒԹՔՆԵՐ (հայերեն տեսով) յեկ ալլ:

### ՄԱՐՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՇՈՒԺՈՎ ՀՈՒԹԸ ԿՏԵՍՆԵՆ

Հեռագիր, հեռախոս, ռադիո (նկարագարդ)  
 Կրոնների ծագումը (նկ.) (մասսայական):  
 Ռազ ի որեր,—Ն. ՈՂԵՑՆԿՈՎ  
 Պայքար աջ վտանգի յեկ հաւաքվողականուրյան դեմ:  
 Քաղցրագիտուրյան դասագիրք (կոմս. հաղաքային գպր. համար):  
 (այս գիրքը առաջիկա 1928—29 տարումն. տար. համար ե. I-ին յեկ II պրակները լույս են տեսել, ինչ III պրակը մամուլի տակ ե):

### ՀԱՆՁՆՎԱԾ Ե ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆ. — 1) «Հոդվածներ 1914—18 թ. թ. պատերազմի մասին», 2) «Ի՞նչ անել», 3) «Քայլ առաջ, յերկու ժայլ յես» (ընդամենը 40 մամուլ):

Պահանջեցեմ մեր լրիվ գրացուցակը, վոր ուղարկվում է ձրի:

5002

ՀՀ Ազգային գրադարան



NL0157137



---

Валерий Язвицкий  
**О боже**  
и  
**богослужении**  
(Происхождение разных вер)

---

На армянском языке  
(с переработкой)

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.  
Москва, центр, Никольская, 10.